

Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջան, Արցախի փողոց 4-րդ նրբանցք հ. 12 հասցեում թափառող կենդանիների կացարանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն



Երևանի քաղաքապետարան

Երևան 2024

Բովանդակություն

1. Ընդհանուր տեղեկատվություն	4
2. Հավելվածներ	4
3. Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը	5
4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ.....	8
5. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը.....	9
6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը	10
6. 2. Շրջակա միջավայրի բնութագրերը.....	14
6.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը.....	14
6.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն.....	15
6.2.3. Կլիմա և օդային ավազան.....	16
6.2.4. Հողային ռեսուրսներ.....	21
6.2.5.Ջրային ռեսուրսներ.....	22
6. 2. 6. Կենսաբազմազանություն	23
6.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ.....	24
6.2.8. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ.	28
6.2.9. Սոցիալ-տնտեսական.....	29
7. Նախատեսվող գործունեության.....	31
Բնութագիրը, տեխնիկական- տեխնոլոգիական լուծումները շինարարության և շահագործման փուլերում	31
8. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր	40
9. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման փուլ).....	41
9.1 Օդային ավազան.	42
9.2 Հողային ռեսուրսներ.....	51
9.3 Ջրային ռեսուրսներ.....	51
9.4 Կենսաբազմազանություն.....	51
9.5 Թափոններ.....	51
9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.....	53
9.7 Աղմուկ և թրթռում.....	53
9.8 Արտակարգ իրավիճակներ.	55
9.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.	55

9.10 Սոցիալական.....	55
9.11 Լանդշաֆտ.....	56
9.12 Բարեկարգում	56
10. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(բնապահպանական կառավարման պլան)	56
11. Մոնիթորինգ	62
12. Բողոքների ընթացակարգ.....	63
13. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան....	64
14. Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ	74
15. Հանրային քննարկումներ.....	78
Գրականություն	79
Հավելվածներ.....	83

1. Ընդհանուր տեղեկատվություն

Հաշվետվություն

Նախաձեռնող
Նախաձեռնողի իրավաբանական հասցեն
Նախատեսվող գործունեության
վարչական տարածքը, փաստացի
գործունեության հասցեն՝
Նախաձեռնողի հեռախոս
Էլեկտրոնային փոստ

Երևան քաղաքի Շենգավիթ
վարչական շրջան, Արցախի փողոց 4-րդ
նրբանցք հ. 12 հասցեում թափառող
կենդանիների կացարանի կառուցում
Երևանի քաղաքապետարան
ՀՀ, ք. Երևան , Արգիշտի 1
ք. Երևան, Շենգավիթ վարչական շրջան,
Արցախի փողոց 4-րդ նրբանցք հ. 12

հեռ. 011514188,
info@yerevan.am

2. Հավելվածներ

Հավելված 1. Տարածքի սեփականության իրավունքի վկայականը

Հավելված 2. Ճարտարապետա-հատակագծային առաջադրանք

Հավելված 3. Երևան քաղաքի ավագանու որոշում

Հավելված 4. Հանրային լսման արձանագրություն, մասնակիցների ցանկ, նկարներ

3. **Գնահատման հաշվետվության կազմման իրավական հիմքերը**

1.«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) հունիսի 21-ի ՀՕ- 110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին (Փոփոխությունները 2023 թվականի մայիսի 3) Օրենք՝ – Կարգավորում է նախատեսվող գործունեության իրականացման ընթացակարգը՝ դիտարկելով շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, անդրսահմանային և շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները: Ներառում է նախատեսվող գործունեության 2 կատեգորիա՝ «Ա», «Բ»՝ ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Համաձայն օրենքի իրականացվում է նախատեսվող գործունեության փորձաքննություն, որից հետո տրվում է եզրակացություն:

2.«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-522-Ն (ընդունված 1999թ. և լրամշակված 2022թ.)- կարգավորում է մթնոլորտային օդի պահպանության իրավական և կազմակերպական հիմքերը՝ ուղղված մթնոլորտային օդի որակի պահպանությանը: Մարդու առողջության և շրջակա միջավայրի համար բարենպաստ մթնոլորտային օդի որակի ապահովման նպատակով՝ մթնոլորտային օդի պահպանության բնագավառում հասարակական հարաբերությունները:

3.«Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանության և օգտագործման մասին» ՀՀ օրենք (1998թ.) -Պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն են՝ պետական հաշվառման վերցված պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց գրաված կամ պատմականորեն իրենց հետ կապված տարածքով, դրանց մասը կազմող հնագիտական, գեղարվեստական, վիճակագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, պատմամշակութային և բնապատմական արժեքները, հիշարժան վայրերը՝ անկախ պահպանվածության աստիճանից:

4.«Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (1999թ.)-Ապահովում է բուսական տեսակների (ֆլորայի) և դրանց առաջացրած համակեցությունների (բուսականության) բազմազանության, աճելավայրերի և էկոհամակարգերի հավասարակշռվածության վրա մարդու բացասական ներգործության կանխարգելումը: Իրականացնում է բուսական աշխարհի, դրա գենոֆոնդի և ցենոֆոնդի բազմազանության, աճելավայրերի պահպանության քանակական և որակական, բուսական աշխարհի շարունակական օգտագործման և վերարտադրության գիտականորեն հիմնավորված ապահովումը, բուսական աշխարհի օգտագործման հարաբերությունների կարգավորումը, բուսական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառում օգտագործողների իրավունքների պաշտպանությունը և պարտականությունների կատարումը:

5.«Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (2000թ.)-Սահմանում է ՀՀ տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը: Նախատեսում է գենոֆոնդի և տեսակային բազմազանության պահպանության, պաշտպանության, բնականոն վերարտադրության ապահովումը, կենդանիների բնակության միջավայրի ամբողջականության խախտման կանխումը,

կենդանական տեսակների և դրանց պոպուլյացիաների ու համակեցուցումների ամբողջականության, կենդանիների միգրացիայի ուղիների պահպանությունը, կենդանական աշխարհի օբյեկտների օգտագործման հարաբերությունների կարգավորումը, կենդանական աշխարհի պահպանության և օգտագործման բնագավառներում օգտագործողների իրավունքների պաշտպանությունն ու պարտականությունների կատարումը:

6.«ՀՀ Հողային օրենսգիրք» (2001թ.) - Սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպա-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

«Թափոնների մասին» ՀՀ օրենքը (2004թ.)-սահմանում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև բնական ռեսուրսների, մարդու կյանքի և առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման համար իրավական և տնտեսական հիմքերը:

7.«Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» օրենքը (2011թ.)-կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում աղբահանության և սանիտարական մաքրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի կազմակերպման սկզբունքները, աղբահանության վճարը, դրա դրույքաչափերը, վճարողների շրջանակը, նրանց իրավունքները և պարտականությունները, վճարման կարգը, պատասխանատվությունը չվճարելու, պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար, տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների իրականացման կարգը աղբահանության և սանիտարական մաքրման կազմակերպման բնագավառներում:

8.«ՀՀ Ջրային օրենսգիրք» (2002) - Նպատակը երկրի ջրային ռեսուրսների պահպանության, ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների և տնտեսության կարիքների բավարարման և ապագա սերունդների համար ջրային ռեսուրսների պահպանման համար իրավական հիմքերի ապահովումն է:

9.«Էներգետիկայի մասին» ՀՀ օրենք (2001թ.) - կարգավորում է ՀՀ Էներգետիկայի բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները և սահմանում է դրանց կիրառման մեխանիզմները:

10.«Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2008թ.)- Սահմանվում է հողերի արդյունավետ օգտագործման և պահպանման, հողային օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման խնդիրները, ձևերը, վերահսկողություն իրականացնող մարմինները, ստուգող և ստուգվող անձանց իրավունքներն ու պարտականությունները, ստուգումների իրականացման կարգերը: Սույն օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ հողային ֆոնդում առկա բոլոր հողամասերի օգտագործման և պահպանության վրա՝ անկախ դրանց նպատակային նշանակությունից, սեփականության և (կամ) օգտագործման իրավունքի սուբյեկտներից:

11. «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998)-կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին

տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը:

12. «Քաղաքաշինության Բնագավառում իրավախախտումների Համար պատասխանատվության մասին» ՀՀ Օրենքը (28 ապրիլի 1999 թ.) -Սույն օրենքը սահմանում է Հայաստանի Հանրապետությունում իրավաբանական անձանց քաղաքաշինության բնագավառում իրավախախտումների համար պատասխանատվության ենթարկելու իրավական հիմքերը՝ քաղաքաշինական գործունեության բոլոր փուլերում քաղաքացիների, հասարակության ու պետության շահերը պաշտպանելու, օրենսդրական ակտերի, ստանդարտների ու կանոնների պահանջների կատարումն ապահովելու նպատակով:

13. Բնության հատուկ պահպանվող արածքների մասին» ՀՀ օրենք (2006)-սահմանում է հատուկ պահպանվող տարածքներն, ինչպես նաև դրանց կառավարման ընթացակարգերը: Նախատեսում է հատուկ պահպանվող տարածքները, առանձնացնելով չորս տեսակ՝ պետական արգելոցներ, պետական պահուստավորման հողեր, ազգային պարկեր, բնական հուշարձաններ, դրանց որոշման և ղեկավարելու գործընթացները:

14. ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343 - Ն որոշում:

15. ՀՀ կառավարության 29. Հունվարի 2010թ. «ՀՀ բույսերի Կարմիր գիրքը հաստատելու մասին» N72-Ն որոշում:

16. ՀՀ կառավարության 29. հունվարի.2010թ. ՝ «ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն որոշում:

17. ՀՀ կառավարության 31.07.2014թ.՝ ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշում:

18. ՀՀ կառավարության 08.02.2018թ. «ԲՆԱԿԿԱՎԱՅՐԵՐԻ ԿԱՆԱԶ ԳՈՏԻՆԵՐԻ ԶԱՓԵՐԻՆ ԵՎ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԿԱԶՄԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՅԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2008 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 30-Ի N 1318-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 108- Ն որոշում:

19. ՀՀ կառավարության 8 սեպտեմբերի 2011 թվականի 08.09. 2011թ. «ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1622-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ԵՎ 2001 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 286-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N1396-Ն որոշում:

20. ՀՀ կառավարության 14 օգոստոսի 2008թ. «Հայաստանի հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» N 967-Ն որոշում:

21. ՀՀ կառավարության 15 մարտի 2007թ. «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշում:

4. Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ փորձաքննական գործընթացների վերաբերյալ

Հայաստանում Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումն իրականացվում է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» 2014 թվականի հունիսի 21-ի ՀՕ-110-Ն Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին /Փոփոխությունները 2023թ./ օրենքի (այսուհետ՝ Օրենք) համաձայն: Գործունեությունները համաձայն Օրենքի դասակարգվում են 2 կատեգորիաների՝ Ա և Բ: Հայտում նախատեսված գործունեությունն ենթակա է փորձաքննության՝ համաձայն Օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 8-րդ կետի ա ենթակետի, Զաղաքաշինության բնագավառում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա են. «քաղաքաշինական գործունեության օբյեկտների կառուցում՝ 1500 քմ և ավելի վերգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով կամ 2000 քմ և ավելի ստորգետնյա ամենամեծ կառուցապատման մակերեսով»: Նախատեսվող գործունեությունը ներառված է Բ կատեգորիայի մեջ և շրջակա միջավայրի գնահատման և փորձաքննության է ենթակա Բ կատեգորիայի ընթացակարգով:

Գնահատման հաշվետվությունը կազմվել է համաձայն Օրենքի 15-րդ հոդվածի Բ կատեգորիայի՝ ՇՄԱԳ հաշվետվությանը ներկայացվող պահանջներին համապատասխան.

1) նախաձեռնողի անունը (անվանումը) և բնակության (գտնվելու) վայրը.

2) նախատեսվող գործունեության անվանումը՝ սույն օրենքի 12-րդ հոդվածին համապատասխան.

3) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության տարածքի, այդ թվում՝ շրջակա միջավայրի, բնական պայմանների, ռեսուրսների նկարագիրը, ինչպես նաև դրանց օգտագործման նպատակը, ենթակառուցվածքները, ազդակիր համայնքը և դրանց տեղադիրքն արտացոլող իրավասու մարմնի տրամադրած տարածական պլանավորման փաստաթղթերը, իրադրության սխեման կամ քարտեզը՝ Հայաստանի Հանրապետությունում գործող միասնական գեոդեզիական կորորինատային համակարգով.

4) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության բնութագիրը շինարարության, շահագործման, փակման և հետփակման փուլերում (օգտագործվող բնական ռեսուրսներ և նյութեր, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումներ).

5) շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները շինարարության, շահագործման և փակման փուլերում.

6) մարդու առողջության վրա հնարավոր ազդեցությունները, գործոնները, ռիսկերը.

7) նախագծային փաստաթղթով նախատեսված բնապահպանական կառավարման պլանը.

8) հաստատված հիմնադրույթային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

9) նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության ազդեցության մշտադիտարկման ծրագիրը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման նպատակն է բացահայտել նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները, նախատեսել համապատասխան միջոցառումներ՝ հնարավոր բացասական ազդեցությունները նվազագույնի հասցնելուն կամ բացառելուն

ուղղված: Նախնական գնահատման հայտը կազմվել է հիմք ընդունելով նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը, նախատեսվող գործունեության տարածքի ուսումնասիրության ընթացքում հավաքագրված տեղեկատվությունը, տարածքի վերաբերյալ ուսումնասիրությունների արդյունքները, քարտեզները, լուսանկարները և այլ փաստաթղթեր:

5. Գնահատման հաշվետվության մշակման հիմքերը, Նախաձեռնողի անվանումը, գտնվելու վայրը և նպատակը

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից, որի իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Արգիշտի 1: Հողատարածքը պատկանում է Երևան համայնքին՝ սեփականության իրավունքով:

Նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Շենգավիթ վարչական շրջան, Արցախի փ. 4-րդ նրբանցք հ. 12 հասցեում՝ 23.50023 հա հողամասում:

Նախաձեռնողի կողմից կացարանի շենքի կառուցման հաշվետվությունը մշակված է հիմք ընդունելով.

Կացարանի շենքի նախագծային փաստաթուղթը,

- համապատասխան համաձայնությունները և թույլտվությունները,

- սեփականության վկայականը՝ N 17032022-01-0116: Հավելված 1

- Երևանի քաղաքապետարանի կողմից տրված 08.04.2024թ.

ճարտարապետահատակագծային առաջադրանքը՝ N 01/18-01-167-24: Հավելված 2

Նախատեսվող գործունեության նպատակը թափառող կենդանիների կացարանի կառուցումն է՝ թափառող կենդանիների խնամք իրականացնելու նպատակով: Տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների:

Հողամասի տարածքում օբեկտի տեղադրումը պայմանավորված է նրանով, որ տարածքում գործում է «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ը, որը թույլ կտա արդյունավետ իրականացնել գործունեությունը:

Սանտարապաշտպանիչ գոտի.

Հայաստանի Հանրապետության Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2024 թվականի փետրվարի 1-ի N 06-Ն հրամանով հաստատված ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերի 128-րդ կետի 5-րդ ենթակետի «ժդ» կետի համաձայն՝ կենդանիների ժամանակավոր խնամքի ծառայությունների կետերը դասակարգվում են հինգերորդ (V) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ շարքին: Նույն հրամանով հաստատված նորմերի 116-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա ներգործության աղբյուրներ հանդիսացող արդյունաբերական, արտադրական օբյեկտների շենքերի և շինությունների համար՝ կախված հզորությունից, շահագործման պայմաններից, շրջակա միջավայր արտանետվող աղտոտիչների բնույթից և քանակից, առաջացող աղմուկից,

թրթռումից և այլ վնասակար ֆիզիկական գործոններից, կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումներից, ինչպես նաև հաշվի առնելով շրջակա միջավայրի և մարդկանց առողջության վրա դրանց անբարենպաստ ազդեցությունը նվազեցնելու անհրաժեշտությունը, արդյունաբերական, արտադրական օբյեկտների սանիտարական դասակարգմանը համապատասխան, սահմանվում են սանիտարապաշտպանական գոտիների հետևյալ կողմնորոշիչ չափերը` (...) 5) հինգերորդ (V) դասի արդյունաբերական օբյեկտներ և արտադրություններ` 50 մ: Տվյալ նախատեսվող գործունեության դեպքում սանիտարապաշտպանական գոտու չափը պահպանվում է, քանի որ մոտակա բնակելի շինությունը գտնվում է 1300 մետր հեռավորության վրա:

6. Նախատեսվող գործունեության ենթակա տարածքի և շրջակա միջավայրի նկարագիրը

5.1 Ենթակա տարածք. գործունեության ենթակա կառուցապատման տարածքը գտնվում է Շենգավիթ վարչական շրջանի Արցախի փ. 4-րդ նրբանցք հ. 12 հասցեում` 23.50023 հա հողամասում: Նախատեսվող գործունեության հողամասը` շենք-շինություններով գոյություն ունեցող կառուցապատված տարածք է: Տարածքում ներկայում գործում է թափառող կենդանիների կացարան: Տարածքը զուրկ է բուսականությունից:

Տարածքը կառուցապատված է: Տարածքում առկա են հետևյալ շինությունները համապատասխան մակերեսներով`

- ✓ Կաթսայատներ` 10.99մ² և 42.55մ²
- ✓ շինություններ` 58.06մ² ,139.33 մ² , 35.81 մ² , 762.94 մ²
- ✓ ջերմոցներ` 1056.73մ² , 4090.65 մ²
- ✓ պարիսպ` 4.8մ²
- ✓ ինքնակամ շինություններ` 266.98մ²:

Կից գտնվում են` Թեյշեբախի փողոցը, ջերմոցներ, թափառող կենդանիների կացարան:

Կլիմա. Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը` Երևան քաղաքի համար: Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1113մ բարձրության վրա, գտնվում է տաք կլիմայական գոտում: Քամու միջին արագությունը կազմում է 1,9մ/վ: Մթնոլորտային տեղումների տարեկան առավելագույն քանակը կազմում է 291մմ, միջին տարեկան հարաբերական խոնավությունը` 61%:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի սահմաններում` հյուս-արևմտյան մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ` դեպի հարավ: Ռելիեֆը բացարձակ նիշերը տատանվում են 901,0-901,6մ սահմաններում:




Ռելիեֆը – գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է Արարատյան հարթավայրի սահմաններում՝ հյուս-արևմտյան մասում: Մակերեսը հարթ է, աննշան թեքությամբ՝ դեպի հարավ: Ռելիեֆը հիմնականում հարթ է, սակայն կառուցապատման համար այն հարթեցված է, դարավանդված, մասամբ ասֆալտապատված: Ռելիեֆը բացարձակ նիշերը տատանվում են 933,0-933,8մ սահմաններում:

Հիդրոերկրաբանական պայմանները – տարածքում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են 20 մետրից խորը հորիզոններում:

Ֆիզիկաերկրաբանական վտանգավոր երևույթները, ինչպիսիք են կարստը, սողանքը, քարաթափությունը, փլուզումը, ճահճացումը, որոնք կարող են բացասական ազդեցություն ունենալ ուսումնասիրվող տեղամասում, բացակայում են:

Սեյսմիկա. Համաձայն ՀՀՇՆ20.04.2020թ.»Երկրաշարժադիմացկուն շինարարության նախագծման նորմեր»-ի ՀՀ ըրածքի սեյսմիկ գոտևորման քարտեզի Երևան քաղաքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, գրունտի սպասվող առավելագույն արագացման գործակիցը՝ 0,4g:


Տարածքի իրադրության սխեման
Գծապատկեր 1



Գործունեության տարածքին ամենամոտ ջրային ռեսուրսը Հրազդան գետն է, որը գտնվում է 4215 մ հեռավորության վրա: Գործունեության տարածքը գտնվում է մոտակա շենք-շինություններից՝ 28-140 մ, ճանապարհից՝ 115 մ հեռավորության վրա: Տարածքում պատմամշակութային հուշարձանները բացակայում են:

Տարածքին կից առկա են ինժեներական ենթակառուցվածքները՝ ջրամատակարարման, ջրահեռացման, էլեկտրամատակարարման համակարգերը:

Ջրամատակարարումը, կոյուղին, շենքի էլեկտրամատակարարումը կիրականացվեն առկա ինժեներական ենթակառուցվածքներից:



6.2 Շրջակա միջավայրի բնութագրերը

6.2.1. Աշխարհագրական դիրքը, ռելիեֆը

Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 830-ից մինչև 1550 մետր բարձրությունների վրա՝ Արաքսի Յրագրան վտակի ափին, Արարատյան դաշտի հյուսիս-արևելքում՝ հյուսիսային լայնության 40° 04' - 40° 14' և արևելյան երկայնության 44° 23' - 44° 37' միջև, երիտասարդ հրաբխային ու նստվածքային ապարներից կազմված 7-8-բալանոց սեյսմիկ և չորրորդ ժամային գոտիներում: Առավելագույն երկարությունը հյուսիսից հարավ 19,7 կմ է, արևմուտքից արևելք՝ 19,1 կմ: Կլիմային բնորոշ են տաք, չոր ամառներ և համեմատաբար կարճ, բայց ցուրտ ձմեռներ: Երևանը գտնվում է բարեխառն գոտու ցամաքային հատվածում, շրջապատված լեռներով ու լեռնաշղթաներով:

Նկար 2.

ՄԱՅՐԱՔԱՂԱՔ ԵՐԵՎԱՆ YEREVAN - CAPITAL

Վարչական շրջաններ District communities



Աջափնյակ	Ajapnyak
Ավան	Avan
Արաբկիր	Arabkir
Դավթաշեն	Davtashen
Էրեբունի	Erebuni
Կենտրոն	Kentron
Մալաթիա-Սեբաստիա	Malatia-Sebastia
Նոր Նորք	Nor Nork
Նորք-Մարաշ	Nork-Marash
Նուբարաշեն	Nubarashen
Շենգավիթ	Shengavit
Քանաքեռ-Զեյթուն	Kanaker-Zeytun


Активация Windows

Երևան քաղաքի տարածքը գտնվում է ծովի մակարդակից 830մ-ից (հարավ-արևմտյան մաս) 1550.0մ (հյուսիս-արևելյան մաս) բարձրության վրա: Կենտրոնի բարձրությունը մոտ 1000մ է: Երևան քաղաքի տարածքի գետային համակարգը ներառում է Յրագրան գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից, Գետառ գետը, որը հոսում է հյուսիս-արևելքից և միանում Յրագրան գետին Էրեբունի համայնքում, Ջրվեժ և Շորաղբյուր գետերը, որոնք ցած են հոսում արևելյան լեռնաշղթայից և միանում Գետառ գետին: Երևան քաղաքի տարածքը բաժանվում է ռելիեֆի չորս տեսակների, որոնք են՝

- 1) Եղվարդի հրաբխային սարահարթը, Կոտայքի հրաբխային սարահարթը և Ջրվեժ-Նորք
- 2) հրաբխային սարահարթը ,
- 2) Շորաղբյուր-Նուբարաշեն թեք հարթությունը և Էրեբունի լեռնաշղթան,
- 3) Յրագրան, Գետառ և Շորաղբյուր գետերի գետային հարթավայրը

4) Մշակված հողերը :

Նկար 3.



Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը) ողողահունի նստվածքներն են:

Ֆիզիկաաշխարհագրական պայմանները. Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում:

Երևան քաղաքի երկրաբանական կառուցվածքին մասնակցում են վերին պլիոցենից մինչև ժամանակակից հասակի նստվածքների համախմբեր, որոնք հիմնականում ներկայացված են հրաբխային, հրաբխա-նստվածքային ֆացիաներով:

Ժամանակակից ռելիեֆի ձևավորման պատմությունը սկսվում է վերին պլիոցենի ժամանակներից, երբ միոցենի նստվածքների հողմնահարված, երոզիոն-դենուդացիոն մակերեսին սկսվել են տեղադրվել վերին պլիոցենի հասակի հրաբխային ապարներ, ինչպես նաև չորրորդական և ժամանակակից առաջացումներ:

6.2.2. Սեյսմիկա և երկրաբանություն

Երևան քաղաքի տարածքում ամենահին երկրաբանական միավորը Ստորին-Միջին Օլիգոցեն ժամանակաշրջանի Շորաղբյուրի շերտախումբն է (P3 1 sh), իսկ ամենաերիտասարդը Հոլոցեն ժամանակաշրջանի (վերջին ժամանակաշրջանը)

ողողահունի նստվածքներն են:

Շրջանի սեյսմիկ պայմանները. Ըստ սեյսմիկ հատկության՝ ՀՀՇՆ-20.04.2020թ.-ի, տեղազնվող շրջանը գտնվում է II սեյսմիկ գոտում՝ գրունտների $A_{max}=0.4g$ արագացմամբ, 9 և ավելի բալլ սեյսմիկությամբ:

6.2.3. Կլիմա և օդային ավազան

Երևանը գտնվում է բարեխառն գոտում՝ ցամաքային կլիմային բնորոշ հատկանիշերով: Դրա շնորհիվ այստեղ պարզ արտահայտվում են տարվա բոլոր չորս եղանակները: Ձմեռները ցուրտ են, երբեմն՝ ձնառատ: Ամռանը հիմնականում շոգ է, չորային: Տեղումների հիմնական մասը լինում է գարնանը, մասամբ՝ աշնանը: Կլիման կիսաչոր է: Տեղումների սակավությանը զուգահեռ՝ շատ են արևային ժամերը, երկինքը պարզ է՝ հիմնականում ամբողջ տարին: Մառախլապատ կամ ամպամած եղանակը, հատկապես ամռանը հազվադեպ երևույթ է:

Գործունեության ենթակա տարածքի կլիմայական բնութագրի համար հիմք է ծառայել ՀՀ քաղաքաշինության նախարարության ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» նորմատիվային փաստաթուղթը՝ Երևան քաղաքի համար: Երևան քաղաքը գտնվում է ծովի մակարդակից 1113մ բարձրության վրա, գտնվում է տաք կլիմայական գոտում: Քաղաքում տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը կազմում է 47 օր, միջին տարեկան ջերմաստիճանը կազմում է $11,9^{\circ}\text{C}$, բացարձակ առավելագույն ջերմաստիճանը՝ $+42^{\circ}\text{C}$, նվազագույնը՝ -28°C , քամու միջին արագությունը հունվար ամսին կազմում է 0,7մ/վ, իսկ հուլիսին՝ 2,8մ/վ: Մթնոլորտային տեղումների տարեկան առավելագույն քանակը կազմում է 291մմ, միջին տարեկան հարաբերական խոնավությունը՝ 61%, գրունտի սառչման առավելագույն խորությունը՝ 60սմ: Ջեռուցման տևողությունը Երևան քաղաքում կազմում է 156 օր:

Աղյուսակ 1.

Օդի միջին ջերմաստիճանը, °C
 ՕԴԻ ՄԻՋԻՆ ԵՎ ԷՔՍՏՐԵՄԱԼ ՋԵՐՄԱՍՏԻՃԱՆԸ,
 ՁՄՈՒՆ ՍԿԻՉԲԸ, ՎԵՐՋԸ ԵՎ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 1 Օդի միջին ջերմաստիճան

Բնակավայրի անվանումը	Միջին ջերմաստիճանն ըստ ամիսների, °C												Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր			
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16
Երևան «Էրեբունի»	-3.6	-1.0	5.3	12.5	17.4	21.8	25.8	25.2	20.5	13.3	6.3	-0.2	11.9	-28	42

Օդի հարաբերական խոնավությունը

Աղյուսակ 2.

ՕԴԻ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԽՈՆԱՎՈՒԹՅՈՒՆԸ

Աղյուսակ 10 Օդի հարաբերական խոնավությունը

Բնակավայրի անվանումը	Օդի հարաբերական խոնավությունը, %													Ամենացուրտ ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		Ամենատաք ամսվա օդի հարաբերական խոնավությունը, %		
	ըստ ամիսների													Միջին տարեկան	Միջին ամսական, Միջին ամսական, ժամը 15-ին		Միջին ամսական, Միջին ամսական, ժամը 15-ին	
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր						
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13					
18. Երևան «Էրեբունի»	79	75	62	56	57	49	45	46	49	62	73	79	61	79	67	45	28	

Մթնոլորտային տեղումները

Աղյուսակ 3

ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՏԵՂՈՒՄՆԵՐԸ

Աղյուսակ 12 Մթնոլորտային տեղումները

Բնակավայրի անվանումը	Տեղումների քանակը $\frac{\text{միջին ամսական}}{\text{օրական առավելագույն}}$ մմ													Տեղումների քանակը նոյեմբեր-մարտ ամիսներին, մմ	Տեղումների քանակը ապրիլ-հոկտեմբեր ամիսներին, մմ
	ըստ ամիսների														
	Հունվար	Փետրվար	Մարտ	Ապրիլ	Մայիս	Հունիս	Հուլիս	Օգոստոս	Սեպտեմբեր	Հոկտեմբեր	Նոյեմբեր	Դեկտեմբեր	Տարեկան		
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13		
22. Երևան	24	23	32	35	45	23	11	8	12	29	28	21	291	128	163
«Էրեբունի»	24	23	34	29	42	34	29	37	51	35	36	28	51		


Քամի

Աղյուսակ 4.

Աղյուսակ 15 Քամի (արդիականացման ենթակա)

Բնակավայրի անվանումը	Ամիսներ	Կրկնելիությունը, %					ըստ ուղղությունների				Անդրորի կրկնելիությունը, %	Միջին ամսական արագությունը, մ/վ	Փերակշռող ուղղությունը հունիս - օգոստոս ամիսներին	Միջին արագություններից նվազագույնը ըստ ուղղությունների հուլիսին, մ/վ	Փերակշռող ուղղությունը դեկտեմբեր - փետրվար ամիսներին	Միջին արագություններից առավելագույնը ըստ ուղղությունների հունվարին, մ/վ	
		Միջին արագությունը, մ/վ					Հարավ-արևմտյան	Արևմտյան	Հյուսիս-արևմտյան	Հարավային							Արևելյան
		Հյուսիսային	Հյուսիս-արևելյան	Արևելյան	Հարավ-արևելյան	Հարավային											
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16		
18. Երևան «Էրեբունի»	հունվար	4	9	11	14	21	25	12	4	76	0.7	Հվ	2.4	Հվ	2.7		
		2.2	2.2	2.2	2.9	2.7	2.3	2.6	2.7								
	ապրիլ	7	14	8	16	20	16	13	6	45	1.9						
		3.1	3.2	2.8	4.0	3.1	3.0	3.8	3.6								
	հուլիս	17	28	4	9	17	13	8	4	36	2.8						
		5.2	5.7	2.8	2.7	2.4	2.7	2.9	4.3								
	հոկտեմբեր	6	18	10	10	21	20	10	5	63	1.0						
		2.9	2.5	2.1	2.5	2.3	2.4	2.9	3.5								

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԿԼԻՄԱՅԱԿԱՆ
ՇՐՋԱՆԱՑՈՒՄԸ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



Օդային ավազան. Մթնոլորտային օդի աղտոտման հիմնական աղբյուրներ են հանդիսանում տրանսպորտը, արդյունաբերությունը, էներգետիկան, քաղաքաշինությունը: Փոշով աղտոտվածություն կարող է առաջանալ արդյունաբերական գործընթացների, տրանսպորտային միջոցների, ճանապարհային փոշու, շինարարության, գյուղատնտեսական և այլ գործողությունների հետևանքով: Ծծմբի երկօքսիդը մթնոլորտային օդում առաջանում է ծծումբ պարունակող վառելիքների այրման, ինչպես նաև արդյունաբերական այլ գործընթացների ժամանակ:

Մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի առաջացման գլխավոր աղբյուրն ավտոտրանսպորտն է:

Հայաստանի հանրապետության տարածքում օդային ավազանի աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանություն և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից:

Մթնոլորտային օդի որակի գնահատումը կատարվում է ՀՀ կառավարության 2006



թվականի փետրվարի 2-ի N 160-Ն որոշմամբ հաստատված աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների (ՍԹԿ) հետ համեմատությամբ: «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մշակվել է քաղաքների, այդ թվում Երևան քաղաքի մթնոլորտային օդի աղտոտող նյութերի միջին հնգամյա ֆոնային կոնցենտրացիաները՝ մգ/մ³, համաձայն, որի.

- Ազոտի երկօքսիդ (NO₂)՝ 0,026մգ/մ³
- Ծծմբի երկօքսիդ (SO₂)՝ 0,017 մգ/մ³
- Ածխածնի օքսիդ (CO)՝ 1.5 մգ/մ³
- Փոշի՝ 0.142 մգ/մ³


Երևան քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի և գետնամերձ օդոնի դիտարկումներ: Զաղաքում գործում է 45 շարժական դիտակետ և 5 անշարժ դիտակայան համաձայն՝ Գլխավոր (armmonitoring.am) էլեկտրոնային կայք էջի:

2024 թվականի հուլիս ամսին կազմակերպության կողմից դիտարկումներ են կատարվել Երևան քաղաքի մթնոլորտն աղտոտող նյութերի պարունակությունները որոշելու համար: Համաձայն, որի Երևան քաղաքում հուլիս ամսվա միջին ամսական կոնցենտրացիաների՝ փոշու, ազոտի երկօքսիդի, ծծմբի երկօքսիդի արտանետումները գտնվում են նորմայի սահմաններում և չեն գերազանցել ՍԹԿ նորմերը:


Վերը նշված նյութերը գտնվում են.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները.



Երևան քաղաքի մթնոլորտային օդում գետնամերձ օզոնի միջին ամսական կոնցենտրացիաները նույն ժամանակահատվածի համար գտնվում են նորմայի սահմաններում՝ ՍԹԿ՝ 30մկգ/մ³:

6.2.4. Հողային ռեսուրսներ

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով լանդշաֆտային գոտում: Երևանի հողերը տիպիկ գորշ, կիսաանապատային են՝ սննդանյութերով աղքատ, հարուստ կարբոնատներով: Այս տիպի հողերը սակավագոր են, ունեն կավավազային կազմ, աչքի են ընկնում կմախքային զանգվածների մեծ պարունակությամբ և քարքարոտությամբ, որի հետևանքով էլ բույսերի աճն ու զարգացումը ընթանում է զգալի դժվարություններով:

Տարածաշրջանում հանդիպում են հողածածկի հետևյալ տիպերը.

- Բաց շագանակագույն, խճաքարային, տեղ-տեղ կարբոնատային ցեմենտացած,
- Կիսաանապատային գորշ, խճաքարային տեղ-տեղ կարբոնատային,
- Պլեոհիդրոմորֆ կապակցված մնացորդային ավալիացած աղակալած:

Հողային ծածկույթի համար վտանգավոր աղտոտիչներ են համարվում ծանր մետաղները, որոնք առաջանում են գործարանների, գյուղատնտեսության, տրանսպորտի գործունեությունից, դրանց գործունեության հետևանքով առաջացող արդյունաբերական և կենդանային թափոններից: Հողերի որակի գնահատումներն իրականացվում է ՀՀ առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի «ՀՀ հիմնական աղտոտիչները և դրանց ազդեցությունը մարդու առողջության վրա» N01-Ն հրամանի Հավելված 3-ին համապատասխան:

Համաձայն «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2021թ. 4-րդ եռամսյակում կատարված ուսումնասիրությունների արդյունքների՝ Երևան քաղաքում ուսումնասիրված հողերում վանադիումի պարունակությունը գերազանցում է համապատասխան ՍԹԿ-ն՝ 1.4-1.8 մկգ/մ², քրոմի պարունակությունը՝ 13.8-28.8 մկգ/մ², նիկելի պարունակությունը՝ 18.3-25.3 մկգ/մ², պղնձի պարունակությունը՝ 19.0-34.7

անգամ, ցինկի պարունակությունը՝ 4.6-38.7 անգամ, արսենի պարունակությունը՝ 5.5-11.0 անգամ և կապարի պարունակությունը՝ 1.3-12.2 անգամ:

6.2. 5. Ջրային ռեսուրսներ

Երևանի կենտրոնով հոսում է Հրազդան գետը՝ իր սելավաբեր և տարանցիկ Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ, Մուշաղբյուր վտակներով: Ներկայումս դրանք ներառվել են արհեստական հունների մեջ և սելավներից ու հեղեղումներից վնասագերծվել: Կառուցվել են Երևանյան լճի, «Հաղթանակ» զբոսայգու և այլ ջրամբարներ: Երևանում կան նաև այլ արհեստական կամ բնական լճակներ, որոնց մի մասը սնվում է ստորգետնյա արտեզյան ջրերից:


Հայաստանի հանրապետության տարածքում ջրային ռեսուրսների աղտոտվածությունը վերահսկվում է ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից: Ջրի որակի գնահատումը կատարվում է համաձայն՝ ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 27-ի N75-Ն որոշման:

Գառնու և Ապարանի բարձունքներից խողովակներով Երևան հասնող ջուրը օգտագործվում է ոռոգման, ինչպես նաև՝ քաղաքի շատրվանների, արհեստական լճակների համար:

Երևանի ներկայիս 33 ջրավազաններից առավել կարևոր նշանակություն ունի Երևանյան լիճը, որը շահագործման է հանձնվել 1967 թվականին: Ավելի քան 40 տարվա ընթացքում լիճը հիմնովին չի մաքրվել (ներկայումս քաղաքապետարանի կողմից սկսվել են մաքրման աշխատանքները): Գետերով այնտեղ է լցվում հսկայական քանակությամբ կենցաղային և շինարարական աղբ, բերվածքների և թափոնների կուտակման հետևանքով ջրամբարի օգտագործման ծավալը գրեթե կիսով չափ նվազել է:

2024 թվականի 1-ին եռամսյակում Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել 20 դիտակետերում:

Համաձայն ՀՀ շրջակա միջավայրի մոնիթորինգի տեղեկագրի՝ 2024թ. 1-ին եռամսյակում գետերում կատարված դիտարկումների արդյունքների՝ Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև և Արզնի ՀԷԿ-ից վերև հատվածներում փետրվարին և մարտին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Արգել գյուղից ներքև հատվածում ջրի որակը փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս), Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ և գետաբերանի հատվածներում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), Գեղանիստ գյուղի մոտ և Երևանյան լճի մուտքի մոտ հատվածներում ջրի որակը փետրվարին և մարտին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս): Գետառ գետի ջրի որակը գետաբերանում փետրվարին և մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Հիդրոերկրաբանական տեսակետից տարածաշրջանում գրունտային ջրերի տեղամասերը գտնվում են ցածր հորիզոնների վրա, քանի որ հրաբխածին կազմավորումները բնութագրվում են ճեղքավորվածությամբ: Համայնքի տարածքի հիդրոերկրաբանական պայմանները հիմնականում բարենպաստ են:

6. 2.6. Կենսաբազմազուլթուն

Երևան քաղաքը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում, չոր տափաստանային՝ կիսաանապատների տարրերով, լանդշաֆտային գոտում, շրջապատված է լեռներով ու լեռնաշղթաներով:

Բուսական աշխարհ. Երևանի ֆլորիստիկ շրջանի բուսականությունը օշինդրա-կիսաանապատային է վաղանցիկ կամ էֆեմերային բուսատեսաների գերակշռությամբ: Երևանյան լանդշաֆտի ամենաբնորոշ առանձնահատկությունն այն է, որ այստեղ բնականորեն չեն աճում ծառա-բույսեր, բացառությամբ մի քանի կիսաթփերի: Հետևաբար, Երևանում ծառերն ու թփերը կարելի է աճեցնել միայն ոռոգման առկայությամբ:

Երևանյան լանդշաֆտում հանդիպում են բուսական համակեցությունների հետևյալ

2 ենթատիպերը՝

1. Ֆրիզանա (ժայռային բուսականություն),

2. Տոմիլյար (անապատային):

Տարածքներին բնորոշ են հիմնականում կիսաանապատային բուսականության պետրոֆիլ տարբերակները, օշինդրա-էֆեմերային և հալոֆիլ, պսամոֆիլ անապատային բուսատեսակները:

Կենդանական աշխարհ. Տարածաշրջանում կենդանական աշխարհը ներկայացված է գերազանցապես անապատային և կիսաանապատային լանդշաֆտներին բնորոշ տեսակներով: Բնական լանդշաֆտների ֆաունան բազմազան է, այստեղ հանդիպում են՝ կաթնասունների շուրջ 20 տեսակ:

Համայնքի տարածքում տարածված են նաև կաթնասունների ֆաունայի ոչ ցանկալի ներկայացուցիչներ, մասնավորապես՝ սև և մոխրագույն առնետները, տնային մուկը: Թռչուններից հանդիպում են շուրջ 100 տեսակ, որոնց մեծ մասը բնադրում են:

Սողուններից հանդիպում են շուրջ 20 տեսակ, երկկենցաղներից հայտնի է 4 տեսակ: Երկկենցաղներից հանդիպում է լճային գորտը, սիրիական սխտորագորտը, կանաչ դողոշը, մողեսներից՝ կլորագլխիկը, օձագլխիկը և երկարատ սցինկը, օձերից՝ կույր օձուկը: Բազմազան են թռչունները և միջատները: Թիթեռներից բնորոշ են սատիրները, խոշոր առագաստաթիթեռներ:

Բնական լանդշաֆտներում բազմաթիվ են անողնաշարավոր կենդանիները: Առավել ուսումնասիրված են բզեզները, հայտնի է մոտ 500 տեսակ: Այլ միջատներից հայտնի են շուրջ 60 երկթև, 40 թաղանթաթևավոր, 130 թիթեռներ, 10-ից 20 տեսակ ուղղաթևեր, սարդեր, փափկամարմիններ, մոտ 30 տեսակ վահանակրեր և տզեր:

Հանդիպում է «Սովորական երկարաթև չղջիկը», որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների և բուսատեսակների հանդիպելը գրեթե բացառվում է:

6.2.7. Պատմության և մշակութային հուշարձաններ

Համաձայն ՀՀ կառավարության 2007թ. մարտի 15-ի «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԵՎ ՕՏԱՐՄԱՆ ՈՉ ԵՆԹԱԿԱ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 385-Ն որոշման՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական տարածքի համար սահմանվում է հուշարձանների հետևյալ ցանկը.

1.11 ՇԵՆԳԱՎԻԹ թաղամաս

Աղյուսակ

1	2	3	4	5	6	7	8
1			ԲՆԱԿԱՏԵՂԻ «ՇԵՆԳԱՎԻԹ»	Ք.ա. 4-3 հազ.	Երևանյան լճի ձախ ափին, հիվանդանոցի մոտ	Յ	2
	1.1		Գաղտնուղի	Ք.ա. 3 հազ.		Յ	2.1
	1.2		Մենաքար (Մենհիր)	Ք.ա. 3 հազ.	«Շենգավիթ» թանգարանի մուտքի մոտ	Յ	2.2
2			ԳԵՐԵՉՍԱՆ ՇՈՒՇԱՆԻԿ ԿՈՒՐՂԻՆՅԱՆԻ	1927 թ., 1952 թ.	Արշակունյաց պող. 28/5, Կոմիտասի անվ. գրոսայգում, պանթեոնի տարածքից դուրս	Յ	6
3			ԳԵՐԵՉՍԱՆՈՑ	12-19 դդ.	Նորագավթի 7-րդ փող., 1- ին նրբ.	Յ	7: Ենթակայու- թյամբ Ներկայաց- ված է ևս 7 հուշարձան (7.1-7.8)
	3.1		Մատուռ «Յոզեփանգստյան»	4-7 դդ.	գերեզմանոցում	Յ	7.9: Ենթակայու- թյամբ Ներկայաց- ված է 1 հուշար- ձան (7.9.1)
4			ԴԱՄԲԱՐԱՆ	Ք.ա. 8-7 դդ.	Արշակունյաց պող. 34, «Ավտոագրեգատ» գործարանի տարած-քում	Յ	8
5			ԵԿԵՂԵՑԻ ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ	4-7 դդ.	Նորագավթի 7-րդ փող.	Յ	9.2: Ենթակայու- թյամբ Ներկայաց- ված է 2 հուշարձան (9.2.1-9.2.2)
6			ՅՈՒՇԱՐՁԱՆ ՅՈՒՆԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ	1956 թ.	Բագրատունյաց փող. 23, թիվ 74 դպրոցի առջև	Տ	10
7			ՅՈՒՇԱՐՁԱՆ ՎԻՍԱՐԻՈՆ ԲԵԼԻՆՍԿՈՒ	1957 թ.	Գարեգին Նժդեհի փող. 22, թիվ 38 դպրոցի առջև	Տ	11

8		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԴԵՐԵՆԻԿ	1977 թ.	Արտաշիսյան փող. 52, թիվ 27 դպրոցի առջև	S	12
		ԴԵՄԻՐՃՅԱՆԻ				
9		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏՈՒՄ ՉՈՅՎԱԾ ՕՂԱՉՈՒԼԵՐԻՆ	1985 թ.	Արշակունյաց պող.	S	13
10		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԼԵՈՅԻ	1972 թ.	Ֆրունզեի փող. 56, թիվ 65 դպրոցի առջև	S	14
11		ՀՈՒՇԱՐՁԱՆ ԱԼԵՔՍԱՆԴՐ	1959 թ.	Թամանցիների փող. 9, թիվ 66 դպրոցի առջև	S	15
		ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ				
12		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՄՈՒՐԱՅԱՆԻ	1955 թ.	Բագրատունյաց փող. 32, թիվ 18 դպրոցի առջև	S	16
13		ՀՈՒՇԱՐՁԱՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ	1992 թ.	Շիրակի փող. 5-րդ կրթ., թիվ 169 դպրոցի առջև	S	17
		ՇԻՐԱԶԻ				
14		ՊԱՆԹԵՈՆ ԿՈՄԻՏԱՍԻ ԱՆՎԱՆ ՉԲՈՍԱՅԳՈՒ	1939 թ.	Արշակունյաց պող. 28/5	Հ	19: Ենթակայու- թյամբ Ներկայաց- ված է 37 հուշարձան (19.1-19.37)
15		ՔԱՂԱՔԱՏԵՂԻ ԹԵՅՇԵԲԱԿԻՆԻ («ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ»)	Ք.ա. 12-9 դդ., 7-6 դդ.	Վերին Չարբախ թաղամասում, Հրազդանի ձախ ափին	Հ	22
	15.1	Բնակելի թաղամաս	Ք.ա. 8-6 դդ.	միջնաբերդից հվ	Հ	22.1
	15.1.1	Բնակելի տներ	Ք.ա. 7-6 դդ.		Հ	3 տուն (22.1.1- 22.1.3)
	15.2	Միջնաբերդ	Ք.ա. 7-6 դդ.		Հ	22.2
16		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԵՐԵՎԱՆ - 1»	մուսուր- յան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում	Հ	24

17		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԵՐԵՎԱՆ - 2»	մուստեր- յան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում, «Երևան- 1»-ից 300 մ գետի հոսանքով վերև	Հ	25
18		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԵՐԵՎԱՆ - 3»	մուստեր- յան շրջան	Երևանյան լճի աջ ափին, սկզբնամասում, «Երևան- 2»-ից 200 մ գետի հոսանքով վերև	Հ	26
19		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ - 1»	Ք.ա. 7 դ., Ք.հ. 15- 16 դդ.	Արզավանդ գյուղից դեպի ծորն իջևող խճուղուց 200 մ գետի հոսանքով վերև	Հ	27
20		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ - 2»	Ք.ա. 7 դ., Ք.հ. 15- 16 դդ.	Արզավանդ գյուղի մոտակայքում, Նախորդից 100 մ խճուղով վերև	Հ	28
21		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ - 3»	Ք.ա. 7 դ., Ք.հ. 15- 16 դդ.	ՆԳՆ բարձրագույն դպրոցի շրջակայքում, Նախորդից 600 մ հեռու՝ դեպի խճուղին	Հ	29
22		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ - 4»	Ք.ա. 7 դ., Ք.հ. 15- 16 դդ.	ՆԳՆ բարձրագույն դպրոցի շրջակայքում, Նախորդից 10 մ հեռու, խճուղու վերջում	Հ	30
23		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ - 5»	Ք.ա. 7 դ., Ք.հ. 15- 16 դդ.	ՆԳՆ բարձրագույն դպրոցի շրջակայքում, Նախորդից 80 մ հեռու	Հ	31
24		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ՇԵՆԳԱՎԻԹ - 1»	քարի դար, Ք.ա. 4-1 հազ.	կամրջի ամ կողմից 50 մ հվ	Հ	32
25		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ՇԵՆԳԱՎԻԹ - 2»	քարի դար, Ք.ա. 4-1 հազ.	կամրջից հս	Հ	33
26		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ՇԵՆԳԱՎԻԹ - 3»	Ք.ա. 4-1 հազ.	կամրջից հս, «Շենգավիթ-2» քարայրից 30 մ հս	Հ	34



27		ՔԱՐԱՅՐ - ԿԱՑԱՐԱՆ «ՇԵՆԳԱՎԻԹ - 4»	Ք.ա. 4-1 հազ.	կամրջից հս, «Շենգավիթ-2» քարայրի հարևանությամբ	Հ	35
----	--	---	------------------	--	---	----

Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների Երևան քաղաքի պետական ցուցակը ներառում է 512 հուշարձան՝ 245 պահպանական միավորով:

6. 2. 8. Հատուկ պահպանվող տարածքներ և բնության հուշարձաններ.

Երևան քաղաքում ներկայումս գործում է Երևանի բուսաբանական այգին և Էրեբունի արգելոցը:

Աղյուսակ 7.

<p><u>Երևանի բուսաբանական այգի</u></p>		<p>0 .8 քկմ</p>	<p>935</p>
<p><u>Էրեբունի արգելոց</u></p>		<p>1 .2 քկմ</p>	<p>981</p>

Բնության հուշարձաններ. ՀՀ Կառավարության 2008թ. օգոստոսի 14-ի N967-Ն որոշման համաձայն՝ Երևան քաղաքում առկա են հետևյալ բնության հուշարձանները.

Աղյուսակ 8.

<p>«Անանուն» սյունաձև բազալտներ</p>	<p>քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում, Սբ. Սարգիս եկեղեցու մոտ</p>
<p>«Անանուն» սյունաձև բազալտներ</p>	<p>քաղ. Երևան, Հրազդանի կիրճի ձախափնյա մասում մանկական ե/գ տանող թունելի արևմտյան ճակատամուտքի մոտ</p>

Գործունեության տարածքում պատմության և մշակութային հուշարձանները տարածքում բացակայում են:

Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները:

6.2.9. Սոցիալ-տնտեսական

Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական ցուցանիշները ներկայացված են ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության պաշտոնական կայքի տեղեկատվության համապատասխան.

Աղյուսակ 9

Տարածքը Territory	223 քառ. կմ/ sq. km
ՀՀ տարածքում քաղաքի տարածքի տեսակարար կշիռը, % Territory share of the city in the territory of the RA, %	0.7
Վարչական շրջաններ District communities	12
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեկգրի դրությամբ Population number as of the beginning of the year, 2023	1 098.9 հազ. մարդ/ ths. Person
ՀՀ բնակչության ընդհանուր թվաքանակում Երևան քաղաքի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022 թ., % Share of city population in the total population of the RA 2022, %	36.9
Գյուղատնտեսական նշանակության հողեր Agricultural land	3 321.5 հա/ ha
այդ թվում՝ վարելահողեր including - arable land	909.9 հա/ ha

Համաձայն ՀՀ Վիճակագրական կոմիտեի 2023թ, տեղեկագրի՝ Երևան քաղաքում 2023թ. հունվարի 1-ի դրությամբ բնակչության թվաքանակը կազմում է 1098,9 մարդ:

Երևանը գտնվում է Արարատյան դաշտավայրի հյուսիս-արևելյան մասում: Սահմանակից է ՀՀ Արագածոտնի, Կոտայքի, Արարատի և Արմավիրի մարզերին:

«Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» օրենքով: Երևան քաղաքը բաժանված է 12 վարչական շրջանների՝ Աջափնյակ, Ավան, Արաբկիր, Դավթաշեն, Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Նուբարաշեն, Շենգավիթ, Զանաքեռ-Զեյթուն: Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի, ներառյալ խմիչքների արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և Էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ): Երևանը Հայաստանի Հանրապետության մայրաքաղաքն է: Այն խոշորագույնն է ոչ միայն ՀՀ ներկա 49 քաղաքների, այլև պատմական Հայաստանի մայրաքաղաքների շարքում:

Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային (միջկառավարական, միջպետական) և այլ կազմակերպությունների ներկայացուցչությունների գրասենյակները:

Երևանը հանրապետության ամենախոշոր տնտեսական կենտրոնն է: Բազմաճյուղ արդյունաբերության հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է: Համաձայն Վիճակագրական կոմիտեի կայք Էջի՝ 2022թ. մայրաքաղաքի տնտեսության հիմնական հատվածների տեսակարար կշիռները Հայաստանի Հանրապետության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն՝ 34.8 %
- շինարարություն՝ 43.3 %
- մանրածախ առևտուր՝ 71.7 %
- ծառայություններ՝ 86.1 %

Երևանի արդյունաբերության հիմնական ոլորտներն են սննդամթերքի, ծախսային արտադրատեսակների, խմիչքների, ինչպես նաև հիմնային մետաղների արտադրությունը, գյուղատնտեսությունը հիմնականում մասնագիտացած է անասնաբուծությունում և բուսաբուծությունում: Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և երկաթուղով: Քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան որոնք ապահովում են կապն արտաքին աշխարհի հետ:

Բեռնաուղևորափոխադրումներն իրականացվում են ավտոմոբիլային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով (քաղաքում գործում է երկաթուղային կայարան և օդանավակայան, որոնք ապահովում են ամբողջ հանրապետության կապն արտաքին աշխարհի հետ):

Շենգավիթ վարչական տարածքը կազմում է 4060հա, բնակչության թվաքանակը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ՝ 142,2 հազ. մարդ:

2020թ. դրությամբ Երևան քաղաքում առկա են 224 պետական և ոչ պետական նախադպրոցական, 252 պետական և ոչ պետական հանրակրթական կրթական հաստատություններ, 50 երաժշտական, արվեստի, գեղարվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործական կենտրոններ, 19 պետական բարձրագույն ուսումնական հաստատություններ, 31 առողջապահական կազմակերպություններ և այլն:

Համաձայն 2019-2023թթ. Երևան քաղաքի զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ազդեցությունն առաջացնող շուրջ 420 կազմակերպություն: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով: Երևան քաղաքի մթնոլորտային օդի և հողերի որակի վատթարացման հիմնական պատճառներից են քաղաքում շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, հրդեհները, կենցաղային և արդյունաբերական աղտոտումը, հողօտարումները, հողի էռոզիան, կանաչ տարածքների կրճատումը և այլն: Այդ նպատակով կարևոր է Երևան քաղաքում բուժերային գոտիների պահպանումը, վերականգնումը և կանաչապատ տարածքների բարելավումը, ավելացումը, ոռոգման ցանցի ընդլայնումը և բարեկարգումը:

Համաձայն զարգացման ծրագրի՝ Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 862.0 հա: Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական վիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, պաշտպանիչ կանաչ բուժերային գոտիների ստեղծման անհրաժեշտություն:

7. Նախատեսվող գործունեության բնութագիրը, տեխնիկական - տեխնոլոգիական լուծումները շինարարության և շահագործման փուլերում

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է ՀՀ ք. Երևան, Շենգավիթ, Արցախի փ. 4-րդ նրբանցք հ. 12 հասցեում՝ 23.50023 հա հողամասում: Նախատեսվում է կառուցել կացարան՝ թափառող կենդանիների համար: Կացարանի կառուցման նախագիծն իրականացված է համաձայն Պատվիրատուի կողմից ներկայացված առաջադրանքի (նաև համաձայնեցված Էսքիզային նախագծի) և Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքաշինական ու նորմատիվ փաստաթղթերի:

7.1 Շահագործման փուլ.

Նախատեսվում է կառուցել թափառող կենդանիների համար կացարան: Այն իրենից ներկայացնում է տարածքի աջ և ձախ կողմերում /գուլգահեռ/ թվով 15 հատ ազատավանդակներ, որոնք իրենց հերթին պետք է բաժանվեն 3 ազատավանդակի:

Նկար 1





Համաձայն նախագծման թույլտվության՝ նախատեսվում է կառուցել մեկ հարկանի շինություն, առավելագույն բարձրությունը հողամասի հատակագծային սիշից մինչև 3,5 մ: Կառուցապատման տոկոսը՝ համաձայն նախագծի, կանաչապատման պահանջ չկա:

Կենդանիների կացարանում աշխատանքների ծավալը որոշվում է սահմանված կարգով հաստատված թափառող կենդանիների թվաքանակի կարգավորմամբ և ներառում է.

- կենդանու ընդունելություն կացարան, փաստաթղթերի լրացում, գրանցում,
- առաջնային բժշկական զննում (անհրաժեշտության դեպքում անասնաբուժական օգնություն),
- կարանտին,
- հիվանդ կենդանիների մեկուսացում,
- կանխարգելիչ միջոցառումների իրականացում (Էկտո- և Էնդոպարազիտների դեմ, պատվաստում),
- ստերիլիզացում (անհրաժեշտության դեպքում),
- նույնականացման նշանի կիրառում (եթե այն բացակայում է),
- նոր տերերի որոնում, կենդանիների տեղափոխում:

Կացարանում կենդանիներին խնամելու աշխատանքի շրջանակը.

- բոլոր կենդանիների և նրանց խցիկների ամենօրյա զննում,
- կենդանիների ամենօրյա կերակրում,
- կենդանիների զբոսանք,
- կենդանիների մաքրում, պարբերական խնամք,
- վանդակների և տարածքների մեխանիկական մաքրում,
- կենդանիների կերակրամանների ամենօրյա լվացում և ախտահանում (առնվազն շաբաթը մեկ անգամ)

- տարածքների սանիտարական մաքրման աշխատանքներ (առնվազն ամիսը մեկ անգամ), ախտահանում (այդ թվում՝ վարակիչ հիվանդությունների հայտնաբերման ժամանակ):

Նախագծով վարչական շենք չի նախատեսվում, քանի որ տարածքում գործում է «Կենդանիների խնամքի կենտրոն» ՀՈԱԿ-ը, որը կկազմակերպի և կիրականացնի կենդանիների պահման և խնամքի հետ կապված միջոցառումները: Կացարանում կաշխատեն ՀՈԱԿ-ի աշխատակիցները և կամավորները:

Թափառող կենդանիներին (շներ) կբռնեն քաղաքում և կտեղափոխեն ժամանակավոր կացարան: Կենդանիները մինչև ապաստարան մտնելն կենթարկվեն բազմակողմանի հետազոտության տարբեր հիվանդությունների հայտնաբերման, ինչպես նաև ստերիլիզացման ընթացակարգի: Կատաղության մեջ կասկածվող կենդանիները կարանտինացվում են ժամանակավոր մեկուսարանում:

Կենդանիների առողջությունը մեծապես կախված է այն տարածքների պատշաճ խնամքից, որտեղ նրանք պահվում են: Կացարանի բոլոր տարածքները, այդ թվում զբոսանքի տարածքները պետք է պահվեն մաքրության մեջ: Դա կատարվում է կանոնավոր մաքրման և պարբերական ախտահանման միջոցով: Հիմնական մաքրումը կատարվում է ամեն օր՝ առավոտյան: Մաքրման ընթացքում կղանքները հանվում են, խցիկները մաքրվում, չորանում և օդափոխվում են, փակ և բացօթյա տարածքներում հատակները ավվում են, իսկ պատերից հանվում են սարդոստայնը և կեղտը: Հաշվի առնելով շների ուժեղ վարակվածությունը որդերով, կղանքն անհրաժեշտ է հեռացնել երկաթե բահով, իսկ զբոսանքի տարածքում կղանքը միաժամանակ հանվի խճե շերտով, որը պետք է փոխարինվի նորով: Հավաքված կղանքը կտեղափոխվի Երևանի քաղաքապետարանի հետ համաձայնեցված տարածք:

Կենդանիների համար նախատեսված վանդակները մաքրվելու և լվացվելու են ամեն օր: Կեղտաջրերը ինքնահոս հեռացվելու են բակային ցանց, որը միանում է կոյուղու բակային ցանցին: Նշված հատվածներում պարբերաբար իրականացվելու են ախտահանման աշխատանքներ՝ համապատասխան մասնագետների ցուցումներով, նպատակ ունենալով պաշտպանել կենդանիների հնարավոր վիրուսային հիվանդություններից:

7.1.1 Կացարանի շենքի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ են.

- հողամասի ընդհանուր մակերեսը - 23.50023 հա
 - Կառուցապատման մակերեսը - 1540մ²
 - Հարկերի քանակը - 1
- 0.000 նիշում տեղակայված են՝ մեկ հարկանի շենք՝ բաժանված ազատավանդակների:

Նախագծով նախատեսված է կառուցել թափառող կենդանիների համար կացարան՝ տարածքի աջ և ձախ կողմերում /զուգահեռ/ թվով 15 հատ ազատավանդակներ, որոնք իրենց հերթին կբաժանվեն 3 ազատավանդակի: Բաժանումն իրականացվելու է քարե բլոկերով: Բաժանված փոքր ազատավանդակների դիմաց նախատեսվում է հատկացնել ազատ տարածք՝ կենդանիների զբոսանքի համար: Բոլոր փոքր ազատավանդակներում նախատեսվում է տեղադրել փայտե բներ: Նախատեսվում է իրականացնել ազատավանդակների պատերի հարդարում և ներկում:

Նախագիծը նախատեսում է անօթևան և թափառող կենդանիների ժամանակավոր կացարանի կառուցում, որը ներառում է՝

- Հողատարածքի ընդհանուր երկարությունը՝ 135 մ , իսկ լայնությունը՝ 17 մ
- Հողատարածքի աջ և ձախ կողմերում /զուգահեռ/ թվով 15 հատ ազատավանդակ, որոնք իրենց հերթին պետք է բաժանվեն 3 ազատավանդակի, բաժանումն կիրականացվի քարե բլոկերով
- Ազատավանդակների պատերի հարդարում և ներկում
- Աջ և ձախ կողմում գտնվող ազատավանդակների միջև հեռավորություն /անցում/՝ 5մ
- Բաժանված ազատավանդակներից յուրաքանչյուրի համար 3մ լայնք, 2,5 մ երկարություն, 2 մ բարձրություն
- Բաժանված փոքր ազատավանդակների դիմաց 3.5 մ ազատ տարածք՝ կենդանիների զբոսանքի համար
- Փոքր ազատավանդակների հատակը՝ բետոնե ծածկույթ
- Չբոսանքի համար նախատեսված հատակը՝ խճե ծածկույթ
- Ազատավանդակների տանիքածածկը կհամապատասխանեցվի տարածքում գոյություն ունեցող շինությունների տանիքածածկերին: Տանիքներից՝ ուղղորդված ջրահեռացման կազմակերպում
- Բոլոր ազատավանդակներում՝ ջրամատակարարման և կոյուղագծերի համակարգեր
- Մեծ ազատավանդակներում՝ արտաքին լուսավորության համակարգ
- Տարածքի գլխավոր մուտքերի մոտ դարպասների իրականացում
- Ազատավանդակների դարպասների իրականացում
- Տարածքի բարեկարգում
- Շին.աղբի մաքրում, հավաքում, բարձում ավտոինքնաթափ և տեղափոխում թափոնատեղ:

Նախագծի իրականացման ընթացքում հաշվի են առնվել սեփականության իրավունքով կառուցապատողին պատկանող հողակտորի նպատակային և գործառնական նշանակությունը, հիմնական հարաչափերը, տեղը և դիրքը: Շենքի հակահրդեհային պաշտպանությունը կազմակերպվելու է համաձայն՝ ՀՀՇՆII-8.04.-2005 «Շենքերի և շինությունների հրդեհային ավտոմատիկա» շինարարական նորմերի, «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի» կողմից տրված հրահանգների:

Տարածք մուտքերը լինելու են Արցախի և այլ փողոցներից:

Հակահրդեհային համակարգ. Հրշեջ պահարանները համալրված են ձեռքի կրակմարիչներով:

Էլեկտրամատակարարում. շենքի էլեկտրամատակարարումը կատարվելու է տարածքում գործող տրանսֆորմատորային ենթակայանից /պայմանագիրը կցվում է/:

Ջրամատակարարում, ջրահեռացում - կացարանի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերը կառուցվելու են համաձայն՝ ՀՀՇՆ 40-01.01-2014 Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում նորմերի պահանջների: Նախագծով նախատեսված են հետևյալ համակարգերը՝

- Խմելու տնտ. ջրամատակարարում
- Կենցաղային կոյուղի
- Անձրևատար կոյուղի

պահպանելով ՀՀ տարածքում գործող շինարարական նորմերը և կանոնները /պայմանագիրը կցվում է/:

Ջրամատակարարում. Նախագծվող կացարանի ջրամատակարարման համակարգը սնվում է տարածքում գոյություն ունեցող ցանցից՝ Ø50մմ տրամագիծ ունեցող խողովակից:

Կենցաղային կոյուղի. Կենցաղային կոյուղու ցանցը ինքնահոս է: Համակարգը մոնտաժվում է կոյուղու PVC Ø50 և Ø110մմ խողովակներով: Կեղտաջրերը ինքնահոս հեռանում են բակային ցանց, որը միանում է կոյուղու բակային ցանցին:

Անձրևատար կոյուղի. Անձրևատար կոյուղու ցանցը մոնտաժվում է կոյուղու PVC-Ս խողովակներից: Անձրևաջրերի հեռացման համար նախատեսված են HL 62.1 տիպի անձրևընդունիչ ձագարներ: Շենքի ներքին բակից անձրևաջրերի հեռացումն իրականացվում է անձրևաջրերի ընդունիչ հորերի միջոցով: Անձրևաջրերը ինքնահոս հեռանում են բակային ցանց, որը միանում է տարածքում գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

Աղբահեռացում. Շահագործման փուլում աղբահեռացումը կատարվում է Երևան քաղաքի ավագանու 23 դեկտեմբերի 2011թ. «Աղբահանության վճար վճարողների հաշվառման, աղբահանության վճարի հաշվարկման, ինչպես նաև այդ վճարի գանձման կարգը հաստատելու մասին» 360-Ն որոշմամբ սահմանված կարգով: Տեղադրվելու են աղբամաններ, այդ թվում աղբի տեսակավորման աղբամաններ:

Տարածք մուտքը լինելու է Արցախի փողոցից:

Բարեկարգում. Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը բարեկարգել:

7.2 Շինարարության փուլ.

7.2.1. Տարածքում քանդման ենթակա շինություններ առկա չեն:

7. 2. 2. Ժամանակացույց

Շինարարարական աշխատանքների տևողությունը հաշվարկվել է ըստ գործող ՀՀՇՆ 1-3.01.-2008 նորմերի:

Շինարարական աշխատանքների ընդհանուր տևողությունը կազմելու է 6 ամիս:

Շինարարական աշխատանքների ընթացքում նախատեսվում է՝

- նախապատրաստական աշխատանքներ
- հողային աշխատանքներ
- ե/բ հիմքերի կառուցում,
 - պատերի կառուցում
- Մետաղական փակոցների պատրաստում և տեղադրում
- տանիքի ծածկի իրականացում
- բարեկարգում:

ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

	ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ ԸՍՏ ԱՄԻՍՆԵՐԻ					
		1 ամիս	1 ամիս	1 ամիս	1 ամիս	1 ամիս	1 ամիս
1	Նախապատրաստական աշխատանքներ	■					
2	Հոդային աշխատանքներ	■					
3	Ե/բ հիմքերի կառուցում		■	■			
4	Պատերի կառուցում			■	■		
5	Մետաղական փակոցների պատրաստում և տեղադրում			■	■	■	
6	Ծածկի իրականացում					■	■
7	Բարեկարգում						■

7.2.3. Շին. հրապարակ. շինարարական աշխատանքների իրականացման համար, մինչ շինարարական աշխատանքների սկսելը, կապալառուն պատվիրատուին կներկայացնի իր կողմից մշակված շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ, համաձայն որի կնախատեսվի շինարարական հրապարակը:

Շինհրապարակում տեղակայվելու են.

- ✓ ավտոմեքենաների, մեխանիզմների կայանման վայրեր,
- ✓ աշխատողների համար հանդերձարան , ճաշարան
- ✓ շինարարական նյութերի, գործիքների պահեստներ,
- ✓ մեքենաների անիվների լվացման հարթակ,
- ✓ կենցաղային աղբամաններ:

Շինհրապարակում նախատեսված է շինարարական աղբի պահման տարածք, կենցաղային աղբի համար տեղադրվելու են մետաղական կամ պլաստմասե աղբամաններ:

Շինարարության ժամանակ նախատեսվող ժամանակավոր պահեստներն, ինչպես նաև աշխատողների համար նախատեսվող ճաշարանը, հանդերձարանը, գրասենյակը, պահակատունը տեղադրվելու են տարածքում՝ ժամանակավոր վազոն տնակներում:

Շինհրապարակի տարածքում կատարվելու է մեքենաների անիվների լվացում: Անիվների լվացում պահանջող մեքենաները պետք է անցնեն անիվների լվացման սարքի միջով՝ շինհրապարակից դուրս գալուց առաջ: Շինհրապարակում անիվների լվացումից առաջացած, ինչպես նաև շինարարական հոսքաջրերը միավորվելու են մեկ բակային՝ ջրահեռացման ցանցին և հեռացվելու են դեպի քաղաքային կոյուղի:

Շինհրապարակը լրացուցիչ չի ցանկապատվելու, քանի որ արդեն գոյություն ունի պարիսպ: Պարսպի արտաքին մասում տեղադրվելու է տեղեկատվական պաստառ:

Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ:

Բոլոր տիպի շին-մոնտաժային աշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարական նորմերը, կանոնները, ստանդարտները և նախագծի տեխնիկական պայմանները:

Շինհրապարակն ապահովվելու է էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Ելնելով առկա պայմաններից շինարարության փուլում նախատեսվում են անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ:

Հողային աշխատանքներ. կառուցապատման ժամանակ կատարվելու են հողային աշխատանքներ: Մնացած հողային զանգվածը կուտակվելու է տարածքում և տեղափոխվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից հատկացված վայր: Տարածքում բացակայում է բուսահողը:

Հողային և հիմնային, տանիքի, հատակների հարդարման, ինչպես նաև լրող և պատող կոնստրուկցիաների շինմոնտաժային աշխատանքները կատարվելու են համաձայն աշխատանքային նախագծի՝ ՇՆուԿ 3.02.02.-87-ի և ՇՆուԿIII-4-81-ի պահանջներին համապատասխան:

Տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, սարքավորումներ, շինարարական աշխատանքներ. գործունեության կատարման շինարարության փուլում օգտագործվող հիմնական տեխնիկա-տրանսպորտային միջոցներն են.

- ինքնաթափ մեքենա
- էքսկավատոր
- Ավտոամբարձիչ
- բետոնախառնիչ
- բետոնամղիչ
- Ձեռքի գործիքներ և այլն:

Շինարարական աշխատանքների՝ բեռնման-բեռնաթափման ժամանակ օգտագործվող բեռնաբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտներին կամ տեխնիկական պայմաններին՝ համաձայն ՇՆ և Կ III-4-80* պահանջներին: Բեռնման և բեռնաթափման համար նախատեսված տարածքը պետք է հարթեցվի և ունենա 50 - ից ոչ ավել թեքություն:

Շինտեխնիկական լինելու է Կապալառու ընկերության սեփական տեխնիկական կամ անհրաժեշտության դեպքում վարձակալվելու են այլ կազմակերպություններից: Մեքենաներն աշխատելու են ըստ հերթականության և ըստ անհրաժեշտության: Աշխատող մեքենաները կայանվելու են գործունեության տարածքում արտադրական հրապարակում: Արտահոսքերից խուսափելու համար լրացուցիչ նախատեսվում է մանրախճի փռում, բետոնասալերի տեղադրում վառելիքի կամ քսայուղերի հնարավոր արտահոսքը հողային և ջրային ռեսուրսներ կանխելու նպատակով: Աղտոտված մանրախճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և փոխարինվելու է նորով, իսկ բետոնասալերը շինարարական աշխատանքների ավարտից հետո տեղափոխվելու են Կապալառու կազմակերպության կողմից:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումն իրականացվելու է շինհրապարակից դուրս՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Կառուցապատման բոլոր լուծումների համար հաշվի են առնվելու տեղանքի պայմանները, կազմակերպվելու է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր միջոցառումներ՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները՝ տեխնիկական վերահսկողություն իրականացնող մարմնի կողմից: Ակտավորվելու են թաքնված աշխատանքները, գրանցելով վարման մատյանում:

Ելնելով առկա պայմաններից շինությունները բացի շինարարական նորմերով տրված անվտանգության հրահանգներից, անհրաժեշտ է կազմակերպել և աշխատանքների կատարման նախագծում արտացոլել անվտանգության նորմերի անհատական մոտեցումներ՝ հատկապես կապված կռունկի գործողության գոտում կատարվելիք շին. մոնտաժային աշխատանքների հետ:

Էլեկտրամատակարարում. շինարարության ընթացքում Էլեկտրամատակարարումը կատարվելու է գոյություն ունեցող ցանցից:

Հրդեհաշիջման համակարգ. շին. հրապարակը կազմակերպելիս ղեկավարվելու են «Քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին»-ի կողմից տրված հրահանգներով:

Շինարարական հրապարակում տեղադրվելու է 3 հրդեհաշիջման վահանակ՝ մուտքերի մոտ, գոյություն ունեցող շենքում, յուրաքանչյուրի վրա հակահրդեհային կրակմարիչներով:

Աղբահեռացում. շինարարության ընթացքում առաջանալու են շինարարական կյուլերի մնացորդներ շինարարական աղբի տեսքով: Շինաղբի կուտակումը կատարվելու է շինհրապարակում նախատեսված վայրում՝ պարկերի մեջ,

չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը:

Կենցաղային աղբի կուտակման համար տեղադրվելու են 2 աղբարկղ:

Շինարարության փուլում աղբահեռացումը կարգավորվելու է շինթույլտվությամբ սահմանված պահանջին համապատասխան:

8. Օգտագործվող բնառեսուրսներ և նյութեր

Կացարանի կառուցման շինարարության փուլում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր, իսկ շահագործման փուլում ջուր՝ խմելու-կենցաղային նպատակով:

8.1 Ջուր. շինարարության փուլում ջուրն օգտագործվելու է աշխատողների խմելու, տնտեսա-կենցաղային կարիքների, տարածքի ջրցանի, հողի(գրունտի) խոնավացման և անհրաժեշտության դեպքում հրդեհաշիջման համար:

Աշխատողների տեխնիկական և կենցաղային նպատակների համար օգտագործվելու է տարածքում առկա ջրագիծը, օգտվելուն են տարածքում գործող սանհանգույցից: Ջրցանի համար նախատեսվող տեխնիկական ջուրը բերվելու է ավտոդիստեռնով: Ջրի մատակարարման հաճախականությունը կատարվելու է ըստ կարիքի: Տեխնիկական ջուրն ըստ անհրաժեշտության օգտագործվելու է հրդեհամարման, ջրցանի և անիվների լվացման համար: Տեխնիկական ջրի մատակարարման աղբյուրը կճշտվի համապատասխան թույլտվություններ ստանալուց հետո, շինարարական աշխատանքների սկզբից՝ կապալառու կազմակերպության կողմից: Տեխնիկական ջրի մատակարարումը կատարվելու է համապատասխան լիցենզիա ունեցող անձանց կամ ընկերությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով:

a) Շինանձնակազմի կենցաղային և տնտեսական ջրածախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$W_{\text{բ.տ.}} = (n \times N + n_1 \times N_1) \times T, \text{ որտեղ}$$

n – ԻՏ աշխատողների, ծառայողների թվաքանակն է՝ 4 մարդ

N – ԻՏԱ ջրածախսի նորմատիվն է՝ 0.016 մ³օր/մարդ

n_1 – սպասարկող աշխատողների թվաքանակն է՝ 10 մարդ

N_1 – սպասարկողների ջրածախսի նորմատիվն է՝ 0.025 խմ.օր/մարդ

T – աշխատանքային օրերի թիվն է՝ 180 օր

$$W_{\text{բ.տ.}} = (4 \times 0.016 + 10 \times 0.025) \times 180 = 56,5 \text{ խմ/շին. ժամ.}:$$

b) Ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը որոշվում է հետևյալ կերպ՝

$$U_1 = S_1 \times K_1 \times T \times D \text{ որտեղ՝}$$

S_1 – ջրվող տարածքի մակերեսը, 1500 քմ;

K_1 – 1 մ² ջրցանի նորմը, 0.0015 խմ;

T – ջրցանի ժամանակահատվածը օրերով, շին. ընթացքում;

D – ջրցանի քանակը օրվա ընթացքում 2;

$U_1 = 1500 \times 0.0015 \times 180 \times 2 = 810$ խմ/շին. ժամ.:

Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 866,5 խմ/շին. ժամ:

8.2 Նյութեր. Շինարարության ժամանակ օգտագործվելու են շինանյութեր, մասնավորապես.

- ✓ երկաթբետոն,
- ✓ ավազ, բետոն
- ✓ քար
- ✓ երեսապատման բարձրորակ նյութեր
- ✓ ապակի
- ✓ մետաղ, մետաղական կառուցվածքներ
- ✓ բարձրորակ սվաղ և ներկ

Շինհրապարակում բետոնի շաղախի պատրաստման հանգույցի տեղադրում և բետոնախնուրդի պատրաստում չի նախատեսվում: Բետոնի շաղախը մատակարարվելու է մասնագիտացված ընկերության կողմից՝ համապատասխան բետոնախառնիչ մեքենաներով: Միաձույլ ե/բ կոնստրուկցիաների բետոնալցման համար համապատասխան դասի բետոնը պատվիրվելու է մասնագիտացված բետոնային հանգույցներում: Բետոնը շինհրապարակում լցվելու է կաղապարների մեջ բետոնամոխիչով:

Շինաշխատանքերը կատարվելու են մասնագիտացված կապալառու կազմակերպությունների կողմից: Շինարարության համար նախատեսված բոլոր նյութերն, ինչպես նաև շենքի արտաքին և ներքին հարդարման նյութերը մատակարարվելու են համապատասխան մասնագիտացված (լիցենզավորված) կազմակերպություններից՝ շինհնդուստրիայի ձեռնարկություններից և գլխավոր շինարարական կազմակերպության արտադրական բազայից: Բետոնի որակը ստուգվելու է շինհրապարակում նախատեսված լաբորատորիայում:

Ձմռանը ներքին հարդարման և բետոնային աշխատանքները կատարվելու են հատուկ տաքացման պայմաններում:

Արտադրական հրապարակում շինանյութերը պահեստավորվելու են պահեստներում, իսկ բաց տարածքի դեպքում կտեղադրվեն տակդիրների վրա՝ չգերազանցելով նախատեսված բարձրության նորմերը: Սորուն նյութերը պահեստավորվելու են ծածկի տակ:

9. Շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը (շինարարության և շահագործման, փակման փուլ)

Գործունեության իրականացման եկթակա տարածքը գտնվում է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի, Արցախի փ. 4-րդ նրբ. հ. 12 հասցեում: Նախատեսվող գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները կառաջանան շինարարության փուլում, կապված՝ հողային աշխատանքների, մեքենաների և շինտեխնիկայի շահագործումից առաջացող ծխազագերի արտանետումների, շինտեխնիկայի շահագործման և ավտոտրանսպորտի տեղաշարժի արդյունքում աղմուկի մակարդակի ավելացման, թափոնների կառավարման, բետոնային աշխատանքների հետ, ինչպես նաև աշխատանքի անվտանգության հետ, որոնք կլինեն կարճաժամկետ:

Գործունեության իրականացումը չի առաջացնելու լանդշաֆտի ծանրաբեռնվածություն, քանի որ տարածքն արդեն կառուցապատված է:

Կացարանի կառուցումը կատարվելու է ՀՀ գործող շինարարական նորմերին և պահանջներին համապատասխան, մասնավորապես ՀՀՇՆ 30.01-2014թ. «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական վայրերի հատակագծում և կառուցապատում», «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն», նորմերին համապատասխան:

9.1 Օդային ավազան.

Գործունեության իրականացման շինարարության փուլում լինելու են օդային ավազան արտանետումներ՝ տրանսպորտային միջոցների աշխատանքի ընթացքում՝ ծխագազերի և հողային աշխատանքների (փորման, հարթեցման), ճանապարհների օգտագործման ժամանակ առաջացող փոշու տեսքով:

Գործունեության իրականացման ընթացքում օդային ավազանի հևարավոր աղտոտվածությունը լինելու է կարճաժամկետ և թույլատրելի նորմերի սահմաններում: Շինարարության ընթացքում, հատկապես չոր և շոգ եղանակներին, կատարվելու են շինհրապարակի և ճանապարհների փոշենստեցման աշխատանքներ՝ ջրցան մեքենայով:

Շինարարության փուլում հարակից բնակելի և հասարակական շենքերից բողբջների դեպքում Կապալառուի կողմից կիրականացվի օդի աղտոտվածության գործիքային չափումներ, որոնք կհամեմատվեն Երևան քաղաքի նորմերի և ելակետային տվյալների հետ:

Ելակետային տվյալներ

Նախատեսվող աշխատանքները իրականացվելու է Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի փ. 4-րդ նրբ. հ. 12 հասցեում: Շինարարության իրականացման ընթացքում լինելու են օդային ավազան արտանետումներ հողային աշխատանքներից:

Շինարարության ժամանակ օգտագործվելու է նաև ավազ՝ ավազակույճային խառնուրդ, խիճ, բիտում, ամրակցող նյութեր և այլ շինարարական նյութեր:

Շինարարության ժամանակ օգտագործվող հիմնական շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների ցանկը ներկայացվում է՝ թվով 5 շինմեքենա/շինտեխնիկա.

- • ինքնաթափ մեքենա - 1 հատ
- • էքսկավատոր - 1 հատ
- • Ավտոամբարձիչ – 1 հատ
- • բետոնախառնիչ – 1 հատ
- • բետոնամղիչ – 1 հատ

Մթնոլորտ արտանետվող նյութերի հաշվարկ

Շինարարական տեխնիկայի տեղաշարժը գրունտային ճանապարհով ուղեկցվում է փոշու արտանետմամբ, ինչն առաջանում է անվաղողերի և գրունտային մակերեսի շփման արդյունքում, գրունտի, շինանյութերի, շինարարական աղբի տեղափոխման, դատարկման աշխատանքների ժամանակ: Շինհրապարակում անօրգանական փոշու արտանետման առավելագույն սահմանաչափը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{C_1 \times C_2 \times C_3 \times K_5 \times N \times L \times C_7 \times q_1}{3600} + C_4 \times C_5 \times K_5 \times q_1^2 \times S \times n, \text{ գ/վրկ}$$

$$M_{\text{տարի}} = 0.0864 * M_{\text{վրկ}} * (365 - (T_{\text{ս}} + T_{\text{ա}})), \text{ տ/տարի}$$

- Որտեղ,
 C₁ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի միջին բեռնանակությունը
 C₂ – գործակից, որը հաշվի է առնում տեղանքում տրանսպորտի տեղաշարժման միջին արագությունը
 C₃ – գործակից, որը հաշվի է առնում ճանապարհների վիճակը
 K₅ – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը
 N – ամբողջ տրանսպորտի վազքընթացների թիվն է ժամում
 L – մի վազքի միջին երկարությունն է
 C₇ – գործակից, որը հաշվի է առնում մթնոլորտ արտանետվող փոշու բաժնեմասը
 q₁ – 1 կմ վազքի դեպքում փոշու արտանետումները մթնոլորտ
 C₄ – գործակից, որը հաշվի է առնում պլատֆորմի մակերեսի նյութի պրոֆիլը
 C₅ – գործակից, որը հաշվի է առնում նյութի շրջափչման արագությունը
 K₅ – գործակից, որը հաշվի է առնում նյութի մակերևույթային շերտի խոնավությունը
 q₁² – նյութի փաստացի մակերևույթի միավորից փոշու արտանետումները
 S – պլատֆորմայի միջին մակերեսն է,
 n – ավտոմեքենաների թիվն է
 T_ս – ձնածածկ օրերի թիվն է
 T_ա – անձրևային օրերի թիվն է

Աղյուսակ 2.

Կատարվող աշխատանքի բնույթը	1	2	3			7	1	4	5	5	12			M, տ/տարի	Q, գ/վրկ	
Մեքենաների շարժը		.6	.1			,2	,01	025	,3	.0	,01	,002	5	3	0,037	0,005
Գրունտի հանույթը		.6	.1			,2	,01	025	,3	.0	,01	,002			0,0013	0,00018
Գրունտի հետլիցք		.6	.1			,2	,01	025	,3	.0	,01	,002			0,0013	0,00018

Արտանետումների վերջնական տարբերակը ներկայացվում է Աղյուսակ 3-ում

Աղյուսակ 3.

Աշխատանքի բնույթը	M, տ/տարի	Q, գ/վրկ
-------------------	-----------	----------

Մեքենաների շարժը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,037	0.005
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,0013	0,00018
Գրունտի հանույթը փոշի՝ 70-20% SiO ₂)	0,0013	0,00018
Արտանետվող փոշու ընդհանուր քանակը	0,0396	0,00536

Փորման աշխատանքների իրականացման արդյունքում արտանետվելու է անօրգանական փոշի՝ 20-70% SiO₂ պարունակությամբ: Նախատեսվող գործունեության նախագծային տվյալների համաձայն գրունտի հանույթի համար օգտագործվելու է 1 էքսկավատոր՝ համապատասխանաբար 1մ³ աշխատանքային շերտի տարողությամբ: Ելնելով գործող մեթոդակարգից՝ արտանետվող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$Q = \frac{P_1 \times P_2 \times P_3 \times P_4 \times P_5 \times P_6 \times B_1 \times G \times 10^6}{3600} \text{ գ/վրկ}$$

0.02

P1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է, 0,04
P2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,
P3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը, 1.2
P4 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը, 0.01
P5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը, 0.5
P6 - գործակից, որը հաշվի է առնում տեղանքի պայմանները, 1.0
B1 - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը, 0.5
G վերամշակվող գրունտի քանակն ըստ աշխատանքային շերտի տարողության՝

9տ/ժ

Այսպիսով,

$$0,04 \times 0,02 \times 1,2 \times 0,01 \times 0,5 \times 1 \times 0,5 \times 4,5 \times 10^6$$

$$Q = \frac{\dots}{3600} = 0,003 \text{ գ/վրկ}$$

Մեկանգամյա համախառն արտանետումը (70-20% SiO₂).

$$M = 0,0036 \times 0,003 \times 72 = 0,00078 \text{տ/շինժամ}$$

Բեռնման – բեռնաթափման աշխատանքների իրականացման արդյունքում առաջացող փոշու հաշվարկն իրականացվել է գործող մեթոդակարգի համաձայն: Թափքի բեռնաթափման աշխատանքներն իրականացվում են ուղղահայաց՝ առանց թևքի կիրառման: Բեռնաթափվում է գրունտ, ինչից առաջացող փոշու ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$K_1 \times K_2 \times K_3 \times K_4 \times K_5 \times K_7 \times K_8 \times K_9 \times B \times G \times 10^6$$

$$M = \frac{\dots}{3600} \times (1 - \eta), \text{ գ/վրկ}$$

K1 - փոշու ֆրակցիայի բաժնեմասն է,

- K2 0-50 մկմ չափերով մասնիկների բաժնեմասն է տարածվող փոշու աերոզոլում,
- K3 - գործակից, որը հաշվի է առնում շինարարական տեխնիկայի աշխատանքի գոտում քամու արագությունը,
- K4 – գործակից, որը հաշվի է առնում տեղի պայմանները, տեղափոխման և փոշեառաջացման պայմանները,
- K5 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոնավությունը,
- K7 - գործակից, որը հաշվի է առնում նյութի խոշորությունը,
- K8 – ուղղման գործակից տարբեր նյութերի համար՝ կախված ճանկաշերտի տեսակից
- K9 – ավտոինքնաթափի համախառն բեռնաթափման ուղղման գործակից
- B - գործակից, որը հաշվի է առնում նյութի բեռնաթափման բարձրությունը,
- G – նյութի վերամշակման գումարային քանակը 1 ժամվա հաշվով, տ/ժ
- η - փոշենստեցման արդյունավետության հարաբերակցությունը մեկ միավորի հաշվով

Արտանետվող փոշու տարեկան քանակը որոշվում է հետևյալ բանաձևով.

$$M_{տ} = K1 \cdot K2 \cdot K3 \cdot K4 \cdot K5 \cdot K7 \cdot K8 \cdot K9 \cdot B \cdot G_{տ}, \text{ տ/տ}$$

ըստ $G_{տ}$ – վերամշակվող նյութի գումարային ծավալն է շինարարության ողջ ժամանակատվածի համար

Գրունտ

$$M = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,2 \cdot 0,21 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 6 \cdot 10^6 / 3600 \cdot 0,15 = 0,000945 \text{ գ/վրկ}$$

$$M_{տ} = 0,05 \cdot 0,03 \cdot 1,2 \cdot 1 \cdot 0,5 \cdot 0,5 \cdot 0,4 \cdot 0,2 \cdot 0,5 \cdot 422 = 0,0076 \text{ տ/տարի}$$

Մթնոլորտ արտանետվող աղտոտող նյութերի բնութագիրը բեռնման – բեռնաթափման աշխատանքներից

Աղյուսակ 4.

Արտանետվող նյութ	Առավելագույն միանվագ, գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Անօդանավային փոշի >70%	0,000945	0,0076
Անօդանավային փոշի 20-70%	0,003	0,0106

Շինարարության ժամանակ աշխատող դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող ընդհանուր գազերի և վնասակար նյութերի հաշվարկն իրականացվել է համաձայն գործող մեթոդակարգի: Հաշվարկի բանաձևը արտանետվող գազերի ընդհանուր ծավալի համար իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$$M' = \frac{\dots}{3600}$$

3600

Որտեղ, G_4 – դիզ. վառելիքի ժամային ծախսն է

q_i – i-րդ աղտոտող նյութի սահմանային ցուցիչն է՝ տ/վ

n – շինհրապարակում միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է:

Հետևաբար,

$$G^4 \cdot q_i \cdot n \cdot 10^3$$

$M' = \frac{0.026 \cdot 0.084 \cdot 3 \cdot 10^3}{3600} = 0,0018 \text{մ}^3$ գազային արտանետման ծավալն է:

$$3600$$

Դիզելային շարժիչով մեքենաներից արտանետվող վնասակար նյութերի հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$G_i = \sum_{k=1}^k (m_{U\theta U_i} \cdot t_{U\theta U} + 1,3 \cdot m_{U\theta U_{ik}} \cdot t_{U\theta U_{ik}}) \cdot N_k / 1800, \text{ ր/с}$$

ր՞de $m_{U\theta U_i}$ – i-րդ նյութի սահմանային արտանետումն է չճանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$1,3 \cdot m_{U\theta U_{ik}}$ - i-րդ նյութի սահմանային արտանետումն է ճանրաբեռնված մեքենայի շարժման ժամանակ գ/ր

$t_{U\theta U}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ չճանրաբեռնված ր.

$t_{U\theta U_{ik}}$ – մեքենային շարժման ժամանակահատվածն է 30ր. կտրվածքով՝ ճանրաբեռնված ր.

N_k – k-րդ խմբի մեքենաների վ միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվն է

i-րդ նյութի համախառն արտահանման հաշվարկն իրականացվում է հետևյալ բանաձևով.

$$M_i = \sum_{k=1}^k (m_{U\theta U_i} \cdot t_{U\theta U} + 1,3 \cdot m_{U\theta U_{ik}} \cdot t_{U\theta U_{ik}}) \cdot 10^{-6}, \text{ տ/տարի}$$

Շինմեքենաների անվանացանկ	Քանակը	Մեկ մեքենայի միջին աշխատաժամանակը							Աշխատանքային օրերի թիվը	Միաժամանակ աշխատող մեքենաների առավելագույն թիվը
		Օր/ժ				30ր/ր				
		ընդամենը	չձանրաբեռնված	ձանրաբեռնած	Ազատ ընթացք	չձանրաբեռնված	ձանրաբեռնած	Ազատ ընթացք		
Ավտովերամբարձ կռունկ	1 (1)	1	0,433	0,5	0, 333	12	13	5	60	+
Բեռնատար ինքնաթափ	1 (1)	1	2,4	2,6	1	12	13	5	160	-
Բեռնատար ավտոբետոնախառնիչ	1 (1)	1	2,4	2,8	1	12	13	5	60	+
Էքսկավատոր	1 (1)	1	2,875	3,2	1,3	12	13	5	30	+
ջրի մեքենա	1 (1)	1	2	2,16667	0,83333	12	13	5	30	+

Աղտոտող նյութի անվանումը	i-րդ նյութի արտանետման ծավալը միաժամանակ աշխատող առավելագույն թվով մեքենաներից յուրաքանչյուրի համար հաշվարկվում է համաձայն $G_i = \sum_{k=1}^k (m_{\text{սթու}} \cdot t_{\text{սթու}} + 1,3 \cdot m_{\text{սթու}k} \cdot t_{\text{սթու}k}) \cdot N_k / 1800,$ <p>բանաձևի, իսկ ընդհանուր գ/վրկ</p>
Ածխածնի օքսիդ	0,00362
Ածխաջրածիններ	0,003214
Ազոտի օքսիդներ	0,00409
Ծծմբի երկօքսիդ	0,00204
Մուր	0,00278

Աղյուսակ 5.

Դիզելային շարժիչներից արտանետվող նյութի ընդհանուր ծավալը ըստ յուրաքանչյուր աղտոտող նյութի և ըստ աշխատող մեքենայի Ամրակցման աշխատանքների ժամանակ օգտագործվող նյութերի և ներկանյութերի համար հաշվարկն իրականացվում է համաձայն հետևյալ բանաձևի.

$$\Pi = 10^{-3} \cdot m_k \cdot (\delta a / 100) \cdot (1 - f_p / 100) \cdot K, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

m_k – օգտագործվող ներկանյութի քանակն է, կգ

δa – ներկի բաժնեմասն է, որը կորում է աերոզոլի տեսքով, %;

f_p -լուծիչ, %;

K – աերոզոլի տեսքով ներկանյութի նստեցման գործակիցն է,

$$\Pi_1 = 10^{-3} \cdot m_k \cdot f_p \cdot \delta' p / 10^4, \text{ տ/տարի}$$

Որտեղ,

f_p - նյութի օքսիդացման չափաբաժինն է

$\delta' p$ – լուծիչի գոլորշիացման մասնաբաժինն է, որն առաջանում չորանալուց:

Հետևաբար ամրակցման աշխատանքների ժամանակ արտանետվող նյութերի քանակն ըստ տեսակի որոշվում է հետևյալ բանաձևով.

$$\Pi' \cdot 10^6$$

$$G = \frac{\Pi' \cdot 10^6}{n \cdot t \cdot 3600}, \text{ գ/վրկ}$$

$$n \cdot t \cdot 3600$$

որտեղ,

Π' - ամրակցման ընթացքում օգտագործվող նյութերի բաժնեմասն է, մեկ ամիս անընդմեջ աշխատելու պարագայում

n – մեկ ամսվա կտրվածքով օգտագործվող նյութերով աշխատելու անընդմեջ օրերի քանակն է

t – օրվա մեջ ներկանյութ օգտագործելու միջին ժամային քանակն է:

Այսպիսով,

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (30/100) \cdot (1-45/100) \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,003308 \cdot 10^6 / (10 \cdot 6 \cdot 3600) = 0,015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 0,003308 \cdot 1 = 0,003308 \text{ տ/տարի}$$

$$G = 0,015316 \cdot 1 = 0,0015316 \text{ գ/վրկ}$$

$$\Pi = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 25 / 10^4) = 0,002256 \text{ տ/տարի}$$

$$\Pi_1 = 10^{-3} \cdot 20,05 \cdot (45 \cdot 75 / 10^4) = 0,006767 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,002256 + 0,006767 = 0,009023 \text{ տ/տարի}$$

$$\Pi = 0,009023 \cdot 0,5 = 0,004511 \text{ տ/տարի}$$

$$G = 0,002256 \cdot 0,5 = 0,001128$$

Այսպիսով, արտանետվող նյութերի տեսակային և քանակական տվյալները ներկայացվում են Աղյուսակ 7-ում

Աղյուսակ 7.

Աղտոտող նյութի անվանումը	Առավելագույն արտանետում գ/վրկ	Տարեկան արտանետում տ/տ
Դիմեթիլբենզոլ	0,001128	0,004511
Կախյալ մասնիկներ	0,0015316	0,002256

Իրականացնելով շինարարության ժամանակ աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետման ծավալների հաշվարկները, ներկայացնենք Աղյուսակ 8-ի տեսքով դրանց ամբողջական վերլուծությունը և նկարագիրը

Աղյուսակ 8.

Շինարարական աշխատանքների փուլերը	Մթնոլորտ վնասակար արտանետումների քանակը, գ/վրկ	ժամանակահատված)							
	Անօրգանական փոշի 70-20% SiO2	Անօրգանական փոշի > 70 SiO2	Ածխածնի օքսիդ	Ածխաջրածիններ (CH)	Ազոտի օքսիդներ	Ծծմբի երկօքսիդ	Մուր	Դիմեթիլբենզոլ	Կախյալ մասնիկներ
1	2	3	4	5			6	7	
Շինտեխնիկայի տեղեշարժ՝ այդ թվում նաև շինադրի տեղափոխում	0,0396	-	-	-	-	-	-	-	-
Փորման աշխատանքներ	0,003	-	-	-	-	-	-	-	-
Բեռնման – բեռնաթափման՝ այդ թվում շենքի վերակառուցման աշխատանքներ	-	0,000945	-	-	-	-	-	-	-
Դիզելային շարժիչից առաջացող արտանետումներ	-	-	0,00362	0,003214	0,00409	0,00204	0,00278	-	-
Ամրակցման աշխատանքներից արտանետումներ	-	-	-	-	-	-	-	0,001128	0,0015316

Կառուցապատման ժամանակ արտանետվող կյուլթերը գտնվում են թուլյատրեյի սահմանային նորմերում, իսկ շինարարությունը կրելու է ժամանակավոր բնույթ, ուստի ազդեցությունը շրջակա միջավայրի վրա նույնպես:

9.2 Հողային ռեսուրսներ.

Գործունեության տարածքի հողի նպատակային նշանակությունը արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության է, իսկ գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների: Հողածածկը Լիցքեր են՝ տարբեր շինարարական կյուլթերի կտորներ, խիճ, խճավազ: Բացակայում է բուսահողը:

Համաձայն նախագծային լուծումների՝ նախատեսվող գործունեության իրականացման համար նախատեսվում է հողային աշխատանքներ, հողային զանգվածն առաջանալու է հիմքերի փորման աշխատանքներից, որի մի մասը նախատեսվում է օգտագործել որպես հետլիցք, իսկ մնացած գրունտը տեղափոխվելու է աղբավայր՝ Երևանի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

Շահագործման փուլում հողային ռեսուրսների վրա ազդեցությունն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

9.3 Ջրային ռեսուրսներ.

Կառուցապատվող տարածքում չկան մակերևութային ջրային ավազաններ կամ առուներ: Ուստի մակերևութային ջրերի վրա ուղղակի ազդեցությունն չի կանխատեսվում: Շինարարական աշխատանքները կատարվելու են ցանկապատված շինհրապարակի ներսում, ինչը կբացառի և/կամ կնվազեցնի հնարավոր արտահոսքերը և արտանետումները ջրային ռեսուրսներ:

9.4 Կենսաբազմազանություն.

Գործունեության ենթակա տարածքը կառուցապատված է, բացակայում է բուսածածկը:

Բուսական աշխարհ. նախատեսվող գործունեության ենթակա տարածքն արդեն ենթարկված է անտրոպոգեն ազդեցությունների, հարակից գտնվում են բնակելի տներ, նոր կառուցվող բնակելի թաղամասեր: Տարածքում բացակայում են ծառեր, թփեր, ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակները:

Կենդանական աշխարհ. գործունեության հարակից տարածքներն արդեն կառուցապատված են, ուստի մարդկային գործոնի, երթևեկության՝ մեքենաների շարժի, աղմուկի պայմաններում տարածքում բացակայում են ՀՀ Կարմիր գրքում գրանցված կենդատեսակները, ինչպես նաև կենդանիների բնադրավայրերը, միգրացիոն ուղիները:

Հաշվի առնելով, որ նախատեսվող գործունեությունն իրականացվելու է Երևան քաղաքի բնակեցված և կառուցապատված վայրում, կենսաբազմազանությանը վտանգ չի սպառնում և բնապահպանական միջոցառումներ չեն նախատեսվում:

9.5 Թափոններ.

Գործունեության իրականացման հետևանքով շինարարության փուլում

առաջանալու են կոշտ թափոններ.

- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած խոշոր եզրաչափերի աղբ (ծածկագիր՝ 91200500 01 00 5)՝ (կարող է լինել ավազի, բետոնի, քարի և այլն մնացորդներ՝ շինարարական աղբի տեսքով) 150 մ³ ծավալով:
- Կազմակերպությունների կենցաղային տարածքներից առաջացած չտեսակավորված աղբ (բացառությամբ խոշոր եզրաչափերի) (ծածկագիր՝ 91200400 01 00 4) կառուցապատման փուլում՝ 840 կգ:
- Փորման աշխատանքների ընթացքում առաջացած վտանգավոր կյութերով չաղտոտված հող» (ծածկագիրը՝ 31401100 08 99 5)՝ 4.058մ³:
- Յուղերով աղտոտված ավազ (յուղի պարունակությունը - 15%-ից ցածր՝ 31402303 01 03 4)՝ 20մ³,
- յուղոտված լաթեր(58200600 01 01 4)՝ 4կգ,
- ներկեր/ Լաքա-ներկանյութերի այլ թափոններ (ծածկագիր՝ 55502900 01 01 4) 3կգ
- կարծրացված սոսնձի թափոններ (ծածկագիր՝ 55700600 01 01 4) 8կգ:

Տարածքում քանդման աշխատանքներ չեն կատարվելու:

Որոշ թափոնների /սև մետաղի, պղնձի, ալյումինի, սոսնձի և այլն/ քանակական գնահատումը կկատարվի Կապալառու կազմակերպության կողմից՝ շինարարության փուլում, ելնելով փաստացի արդյունքներից:

Այս կարգի թափոնները համաձայն՝ ՀՀ բնապահպանության նախարարի 2006թ. դեկտեմբերի 25-ի N430-Ն և 2006 թվականի հոկտեմբերի 26-ի N342-Ն հրամանների՝ ըստ վտանգավորության դասակարգված թափոնների ցանկի՝ պատկանում են վտանգավորության 4 և 5-րդ դասերին: 3-րդ դասի թափոններն առաջանալու են մասնագիտական կազմակերպությունների աշխատանքների արդյունքում, որոնք սովորաբար տարածքից հեռացվում են հենց իրենց կողմից, չհեռացնելու պարագայում դրանք կհանձնվեն համապատասխան լիցենզավորված կազմակերպություններին պայմանագրային հիմունքներով:

Շինաղբի, չաղտոտված հողային զանգվածի տեղափոխման վայրը, ինչպես նաև վերը նշված թափոնների տեղափոխման վայրը կճշտվի Երևանի քաղաքապետարանի հետ՝ շին. թույլտվության փուլում:

Կենցաղային աղբի հաշվարկները

Կենցաղային աղբի ծավալը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$M=n*m$$

m – 1 հերթափոխում կենցաղային աղբի քանակը մեկ մարդու հաշվով՝ 120կգ/տ

n – աշխատողների թիվն է.

$$M=14*120= 1680կգ/տ կամ 5կգ/օր/տարվա կտրվածքով 312 աշխատանքային օր/$$

Շինարարությունը տևելու է կես տարի /6 ամիս/, հետևաբար

$$M=840կգ$$

Շահագործման փուլում կենցաղային աղբի առավելագույն ծավալը հաշվարկվել է հաշվի առնելով աշխատողների առավելագույն քանակը՝ 10 մարդ: Շահագործման փուլում կենցաղային աղբի քանակը կկազմի.

$$M=10*360= 3600\text{կգ/տարի կամ } 11\text{կգ/օր:}$$

9.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Գործունեության ենթակա և մոտակա տարածքներում բացակայում են պատմամշակութային արժեք ունեցող պատմամշակութային և բնության հուշարձանները: Կառուցապատման ենթակա տարածքը չի առնչվում Շենգավիթ վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների, ինչպես նաև հատուկ պահպանվող տարածքների հետ:

Ուստի հնարավոր ազդեցություններ վերջիններիս վրա չի նախատեսվում:

Միաժամանակ շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

9.7 Աղմուկ և թրթռում.

Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը կապված է լինելու շինարարական տեխնիկայի, սարքավորումների և տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: ՀՀ-ում աղմուկի մակարդակը կանոնակարգվում է համաձայն ՀՀ Առողջապահության նախարարի 2002թ. մարտի 6-ի՝ «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ N2-III-11.3 ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ N 138 հրամանի և ՀՀ Քաղաքաշինության նախարարի 2014թ. մարտի 17-ի՝ ՀՀՇՆ 22-04-2014 «ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՂՄՈՒԿԻՑ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ N79-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

Աղմուկից պաշտպանվող օբյեկտ են հանդիսանում հարակից բնակելի շենքերը, որոնց պատերը, երկշերտ պատուհանները արդեն իսկ կրում են աղմուկի մեկուսիչի դեր: Աղմուկի հիմնական աղբյուր են հանդիսանում շինարարության սկզբում էքսկավատորը: Աղմուկի աղբյուրը կրում է ժամանակավոր բնույթ: Էքսկավատորը աշխատելու է 1 ամիս աղմուկի մակարդակը՝ $L_{aEկվ}$, կազմում է 85 դԲ: Աղմուկի մակարդակի հաշվարկը կատարվել է համաձայն ՀՀՇՆ 22-04-2014: Շինհրապարակը լինելու է ցանկապատված: Ցանկապատի նյութի խտությունը՝ $\leq 200\text{կգ/մ}^2$: Շինության պատերը ևս հանդիսանում են միաժամանակյա աղմուկից պաշտպանման էկրան:

Պաշտպանիչ էկրանի արդյունավետությունը հաշվարկում են հետևալ բանաձևով.

$$I_{աղ} = 23 \text{ Ig } mE - 10 \text{ դԲ, երբ } m \geq 200 \text{ կգ/մ}^2$$

$$I_{աղ} = 13 \text{ Ig } mE - 13 \text{ դԲ, երբ } m \leq 200 \text{ կգ/մ}^2$$

Որտեղ $m = Km$ – մակերեսի խտության էկվիվալենտն է,

m – մակերեսի խտությունն է, կգ/մ²,

K – գործակից է, որը հաշվի է առնում պատնեշի խտությունը, որը 200կգ/մ² $K=1,3$

$M = 1,3 \times 200 = 260$

$L_{աղ} = 13lg mE - 13 = 18,2$ դՔ

Շինությունից դուրս աղմուկի մակարդակը կկազմի՝

$L_{Aտար} = L_{AԷկվ} - L_{աղ} = 85 - 18,2 = 66,8$ դՔ

Հարակից բնակելի շինությունների պատերը, պատուհանները, մուտքի դռները, տանիքը, կանաչապատ տարածքը հադիսանում են որպես պաշտպանիչ Էկրան: Ձայնամեկուսացումը $R_{կտր}$ ըստ աղուսյակ 2՝ կազմում է միջինը 50 դՔ:

$L_{Aտար} = 66,8 - 50 = 16,8$ դՔ

Մոտակա բնակելի շինությանների ներսում աղմուկի մակարդակը էքսկավատորի աշխատանքի դեպքում կկազմի 16,8 դՔ, ինչը նորմայից բավականին ցածր է: Աշխատանքները իրակացվելու են միայն ցերեկային ժամերին:

Թրթռում

Թրթռման նորմաները բնակելի շենքերում, ըստ ՀՀ առողջապահության նախարարի 17 մայիսի 2006թ. N533-Ն որոշման, ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

Հասարակական շենքերում թրթռման (վիբրացիայի) թուլյատրելի մակարդակները

Միջին երկրաչափական հաճախականության թուլյատրելի արժեքները X0, Y0 և Z0 օկտավային շերտեր, Հց	Թուլյատրելի արժեքները			
	Թրթռա արագացում		Թրթռա արագություն	
	մ/վրկ ² .10-3	դՔ	մ/վ .10-3	դՔ
2	10,0	80	0,79	84
4	11,0	81	0,45	79
8	14,0	83	0,28	75
16	28,0	89	0,28	75
31,5	56,0	95	0,28	75
63	110,0	101	0,28	75
Ճշգրտված ու համարժեքային ճշգրտված արժեքները և դրանց մակարդակները	10	80	0,28	75

Ոչ մշտական թրթռման (վիբրացիայի) համար թուլյատրելի արժեքներին մտցվում է ուղղում - 10դՔ, իսկ բացարձակ արժեքները բազմապատկվում են 0,32-ով:

Դպրոցների սենքերի, ուսումնական հաստատությունների, գրադարանների ընթերցասրահների համար մտցվում է ուղղում -3դՔ:

Շինարարության ընթացքում թրթռման աղբյուր են հանդիսանում շինտեխնիկայի աշխատաքը, որոնց թրթռման մակարդակը ցածր է, և արդեն իսկ շինհրապարակի սահմաններում այլքը մարում է և չի կարող ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Համապատասխան բնապահպանական միջոցառումների կիրառման դեպքում շինարարական աղմուկի և թրթռումների մակարդակը շինհրապարակին հարակից տարածքում չի գերազանցի ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերը:

Շահագործման փուլում աղմուկի և թրթռումների ազդեցությունն չի նախատեսվում, ելնելով գործունեության բնույթից:

9.8 Արտակարգ իրավիճակներ.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերի առաջացում կապված՝

- բնական աղետների,
- սողանքների, հրդեհների,
- հեղուկ նյութերի արտահոսքի
- շահագործվող շինտեխնիկայի վթարների հետ:

Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների ռիսկը կապված է շենքում հրդեհների, բնական աղետների հետ:

Էներգախնայողություն, Էներգաարդյունավետություն.

Շինությունը կառուցելիս առաջնորդվելու են ՀՀ կառավարության 12.04.2018թ N426-Ն որոշմամբ սահմանված պահանջներով,

• կացարանն ապահովված է լինելու արտաքին լուսավորության, օդափոխության, հակահրդեհային միջոցներով՝ կրակմարիչներով,

• հրակայուն և անջրաթափանց, գույրոշակայուն և գույրոշամեկուսիչ, ջերմամեկուսիչ նյութերով,

- լուսավորությունը կատարվելու է լեդ տեսակի լամպերով:

9.9 Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն.

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում հնարավոր են աշխատողների արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության հնարավոր ռիսկերի առաջացում կապված հրդեհների, հեղուկ նյութերի արտահոսքի, աշխատողների վնասվածքների և տեխնիկա-տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում հնարավոր վթարների հետ:

Հնարավոր ազդեցություններից խուսափելու համար շինաշխատանքները կկատարվեն պահպանելով շինարարության ժամանակացույցը և աշխատանքի անվտանգության կանոններն՝ ըստ ՇՆԱԿ-3-480* նորմերի:

9.10 Սոցիալական.

Շինարարության ընթացքում բացվելու են նոր աշխատատեղեր: Նախատեսվող աշխատողների առավելագույն քանակը կազմվելու է 14 մարդ, որից ճարտարագիտատեխնիկական անձնակազմ՝ 4 մարդ, բանվորներ՝ 10 մարդ /ներառյալ մեքենավարներ և այլ նեղ մասնագիտություն ունեցողներ/:

Աշխատելու են 6 օր՝ 8 ժամյա հերթափոխային գրաֆիկով:

Շինարարության ընթացքում առաջանալու են հարակից տարածքի բնակիչների տեղաշարժի ժամանակավոր անհարմարություններ, որոնք հնարավոր է կանխարգելել

կառավարման պլանով նախատեսված միջոցառումների կատարման միջոցով: Շինարարության ընթացքում այլ անձանց իրավունքների սահմանափակում կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ կարգի խախտում չի նախատեսվում:

9.11 Լանդշաֆտ.

Գործունեության իրականացումը չի առաջացնելու Է լանդշաֆտի լրացուցիչ ծանրաբեռնվածություն, քանի որ գործունեությունն իրականացվելու է կառուցապատված տարածքում: Նախատեսվող գործունեության իրականացման տարածքներում (ազդեցության գոտում) լանդշաֆտի, բուսական ու կենդանական տեսակների, հողային և ջրային ռեսուրսների վրա հնարավոր վնասակար ազդեցություններ չեն ակնկալվում: Նախատեսված շինարարական աշխատանքների ազդեցությունը տարածքի վրա կլինի նվազագույն՝ կրելով սահմանափակ և կարճատև բնույթ:

9.12 Բարեկարգում

Կառուցապատման ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում, թափոնների և վտանգավոր նյութերի հեռացում, բոլոր ժամանակավոր կառույցների ապամոնտաժում, ճանապարհների կարգաբերում, տարածքի բարեկարգում:

10. Շրջակա միջավայրի, մարդու առողջության վրա վնասակար ազդեցության բացառմանը, նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումները(Բնապահպանական կառավարման պլան)

Ներկայացված հայտով նախատեսվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր բացասական ազդեցությունների մեղմանն ուղղված նախատեսվող միջոցառումներ՝ բնապահպանական կառավարման պլան, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

10.1 Օդային ավազան արտանետումների քանակը մեղմելու, մթնոլորտային օդի որակի վրա հնարավոր ազդեցությունը կրճատելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում՝ գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան,

- մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս ելն գալու մաքուր վիճակում,

- գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով,

- շինհրապարակում սորուն նյութերը պահվելու են ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառել տարածքում թափոնների բաց այրումը,

- օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում,

- բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ:

Նշված միջոցառումների իրականացման արդյունքում օդային ավազանի

աղտոտվածության լրացուցիչ ավելացում չի նախատեսվում:

10.2 Հողային ռեսուրսներ. Հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու համար նախատեսվում է.

- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում, առանձնացված վայրում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտը մասամբ օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,

- շինհրապարակն ապահովված է կլինի արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,

- շինարարական նյութերը կտեղադրվեն հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,

- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,

- ավտոմեքենաները շինհրապարակից դուրս են գալու միայն մաքուր վիճակում՝ շրջակա տարածքը չաղտոտելու նպատակով,

- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կկատարվի տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,

- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է բետոնասալ կամ մանրախիճ,

- մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր, այն փոխարինելով նորով,

- մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում,

- բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարել մինչև վերջիններիս շինհրապարակից դուրս գալը:

10.3 Ջրային ռեսուրսներ. Գործունեության իրականացման շինարարության փուլում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու կամ կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- փոշենստեցման համար ջրցանը կատարվելու է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր,

- անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող հոր,

- ջրցանման համար կօգտագործվի միայն տեխնիկական որակի ջուր,

- տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը,

- շինարարական տրանսպորտային միջոցների և սարքավորումների սպասարկումը կատարվելու է համապատասխան մասնագիտացված կետերում,

- շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով,

-բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար:

Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվում է.

- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում գործող սանհանգույցից:

Շահագործման փուլում կացարանի ջրամատակարարման համակարգը միացված է քաղաքային ջրատարին, իսկ ջրահեռացման համակարգը՝ քաղաքային ջրահեռացման ցանցին:

10.4 Կենսաբազմազանություն. Գործունեության իրականացումը շրջակա միջավայրի կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցությունն չի ունենալու, այնուամենայնիվ նախատեսվում են որոշակի միջացառումներ.

-գործունեության և հարակից տարածքում ընկերության կողմից պարբերաբար կատարվելու է մոնիթորինգ առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,

-գործունեության և հարակից տարածքներում ՀՀ Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների կամ կենդանիների բնադրավայրերի հայտնաբերման դեպքում՝ դրանց պահպանության նպատակով, ընկերությունը տեղեկացնելու է համապատասխան պատասխանատու գերատեսչություններին,

-աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող որոշ կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար:

10.5 Թափոններ.

Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից,

-շինհրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,

-շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթիլենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,

- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,

- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է 2 հատ պլաստմասե աղբահավաք տարողությունների մեջ,

- կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

- շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,

- բացառել աղբի կուտակումը շիրապարակից դուրս՝ այլ տարածքներում,

- շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական նյութերի մնացորդները, վտանգավոր նյութերը/սոսիսձի, ներկի մնացորդներ/ և այլն հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուհի կողմից:

Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 2 հատ պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:

10.6 Պատմամշակութային և բնության հուշարձաններ.

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմինն (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:

10.7 Աղմուկ և թրթռում. Շինարարության փուլում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,

- շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ,

- տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում,

- պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները,

- բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ,

- օգտագործվող շին տեխնիկան և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով,

- պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը:

10.8 Արտակարգ իրավիճակներ. Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.

- կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է շենքի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն:

- շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,

- շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, տեսահսկման և ազդանշանային համակարգերով, հակահրդեհային միջոցառումների վահանակներով,

- շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթուկավտանգ թափոններից և աղբից,

- հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար,

- բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ,

- տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար,

- հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար,

- մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են:

Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.

- շահագործման փուլում շինությունն ապահովված է լինելու հրդեհամարման համակարգով, էվակուացիոն ուղիներով և ելքերով,

- պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար:

10.9 Մարդու առողջություն, աշխատանքի անվտանգություն.

Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է.

- պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնանները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները,

- ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա,

- մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների,

- բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,

- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,

- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով

(վազարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),

- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,

- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,

- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,

- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,

- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,

-բացառել բեռի ամբարձիչից կախված մնալը ամբարձիչից աշխատանքի դադարի ժամանակ,

- բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,

- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,

- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 յուրքսից ոչ պակաս,

- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կատարել հոսանքատար մասերի մեկուսացում,

- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:

Շահագործման փուլ.

Մասնավորապես նախատեսվում է.

- տարածքի մուտքը կահավորել տարածքի վերաբերյալ հաշմանդամների համար մատչելի տեղեկատվության տարրերով:

10.10 Սոցիալական. Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.

- շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,

- բացառել շինհրապարակից դուրս կենցաղային աղբի և շինաղբի, մեքենաների կուտակումները,

- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:

10.11 Լանդշաֆտ. Լանդշաֆտի վրա հնարավոր կլինի նվազեցնել շինարարության փուլում բնապահպանական կառավարման պլանով նախատեսված միջոցառումների արդյունքում:

-բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.

- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,
- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,
- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:

10.12. Բարեկարգում.

- Բարեկարգման և կանաչապատման նպատակով նախատեսվում է.
- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում:

11. Մոնիթորինգ

Մոնիթորինգը՝ ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարման, դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով Պատվիրատուի և հսկողությունն իրականացնող այլ մարմինների կողմից նախատեսվող կանոնավոր հսկողությունն է: Գործունեության իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմանն ուղղված մոնիթորինգ:

Այդ նպատակով նախատեսվում է.

- համապատասխան մասնագետների կողմից ստուգայցերի կատարում,
 - բնապահպանական, առողջության և աշխատանքային անվտանգության, տեխնիկական վերահսկողության իրականացում՝ ամենօրյա ռեժիմով,
 - բոլոր աշխատողների աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին իրազեկում,
 - տեխնիկական վերահսկողությունն իրականացնող կազմակերպությունը կամ անձը պարտավոր է ժամանակին Պատվիրատուին և/կամ նախագծային կազմակերպությանը տեղեկացնել նկատած անհամապատասխանությունները,
 - շինարարության կանոնների և անձնական պաշտպանության նորմերի, հակահրդեհային պահանջների՝ ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերի համապատասխանության խստիվ պահպանման հսկողություն,
 - համապատասխան պայմանագրերի հիման վրա թափոնների տեղափոխման վերահսկում,
 - շին. տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգումներ՝ անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը բացառվելու նպատակով,
 - շինարարության իրականացման ժամանակացույցի պահպանում,
 - բարեկարգման աշխատանքների իրականացման վերահսկում:
- Շինարարության իրականացման որակի չափանիշները հսկվելու են տեխնիկական հսկողությունն իրականացնող մարմնի կողմից, հատկապես ակտավորելով թաքնված աշխատանքների իրականացումը, գրանցելով վարման մատյանում:

12.Բողոքների ընթացակարգ

Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում կներդրվի բողոքների արձագանքման մեխանիզմ (ԲԱՄ), որը հիմնականում ուղղված կլինի շահագրգիռ կողմերի և ազդակիր հասարակության կողմից իրականացվող գործունեության վերաբերյալ դժգոհությունների ստացմանը, գնահատմանն ու լուծմանը:

Շինարարական բոլոր տեղամասերում ապահովվելու է կոնտակտային տվյալները, պատասխանատու անձանց և անվտանգության պատասխանատուի անուն(ները), հեռախոսահամարները պարունակող պաստառների առկայությունը:

13. Բնապահպանական կառավարման պլանը

Բնապահպանական կառավարման պլանը սահմանում է նախնական գնահատման հայտում նշված գործունեության իրականացման հետևանքով շրջակա միջավայրի բաղադրիչների՝ օդային ավազան, հողային, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության, թափոնների կառավարման, արտակարգ իրավիճակների, աղմուկի մակարդակի, մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ կապված հնարավոր ազդեցությունների մեղմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնց ճիշտ կիրառման արդյունքում գործունեության իրականացման հետևանքները շրջակա միջավայրի վրա կլինեն նվազագույնը:

14. Բնապահպանական միջոցառումների (բնապահպանական կառավարման) պլան

	Օդային ավազան	<p>Օդային ավազան արտանետումների հնարավոր ազդեցությունը կրճատելու և մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շինարարական աշխատանքների և ճանապարհների շահագործման ընթացքում գրունտի խոնավեցում և ճանապարհների ջրցան, - մեքենաները շին. հրապարակ մտնելու և դուրս ելն գալու մաքուր վիճակում, - գործունեության վայր շինանյութերի և սորուն նյութերի տեղափոխումը կատարել փակ ծածկ ունեցող մեքենաներով կամ նյութերը տեղափոխող մեքենաները փակել անջրթափանց թաղանթով, - շինհրապարակում սորուն նյութերը պահել ժամանակավոր պահեստներում կամ ժամանակավոր ծածկի տակ՝ ծածկել անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - բացառել տարածքում թափոնների բաց այրումը, - օգտագործվող տեխնիկան, սարքավորումները և տրանսպորտային միջոցներն օգտագործել միայն սարքին վիճակում, - բացառել անսարք վիճակում գտնվող և արտահոսքեր ունեցող մեքենաների օգտագործումը: Այդ նպատակով իրականացվելու են պարբերաբար ստուգումներ: 	Կապալառ ՈՒ	Նախաձեռնող
2	Չողային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման հետևանքով հողային ռեսուրսներն աղտոտումից պահպանելու նպատակով նախատեսվում է.</p>	Կապալառ ՈՒ	Նախաձեռնող

		<p>- շինարարական աշխատանքների ընթացքում հանված հողային գրունտն օգտագործվելու է տարածքի հարթեցման և բարեկարգման նպատակով,</p> <p>- հողային աշխատանքների արդյունքում հանված հողային գրունտը մինչև օգտագործելը պահվելու է շինհրապարակում՝ ծածկված անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով,</p> <p>- շինհրապարակն ապահովված է լինելու արտահոսքը կանխող/մաքրող սարքավորումներով՝ հողի հնարավոր աղտոտումը կանխելու համար,</p> <p>- շինարարական նյութերը տեղադրել հատուկ տակդիրների կամ բետոնապատ մակերեսների վրա,</p> <p>- նվազագույնի է հասցվելու շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը,</p> <p>- շինարարության փուլում օգտագործվող տրանսպորտային միջոցների լիցքավորումը և տեխնիկական սպասարկումը կատարվելու է տարածքից դուրս՝ հատուկ մասնագիտացված կազմակերպություններում,</p> <p>- այն հատվածներում, որոնք նախատեսված են շինարարական տեխնիկայի տեխնիկական սպասարկման և կայանման համար տեղադրվելու է ավագ կամ մանրախիճ, - մեքենաներից և սարքավորումներից վառելիքի և/կամ քսայուղերի արտահոսքի դեպքում, փռված ավազը կամ մանրախիճը տեղափոխվելու է համապատասխան աղբավայր և այն</p>		
--	--	---	--	--

		<p>փոխարինվելու Է նորով,</p> <ul style="list-style-type: none"> - մեքենաների անիվների լվացումը կատարել անիվների լվացման հարթակում. - բոլոր մեքենաների անիվների և թափքերի մաքրումը կատարվելու Է մինչև շինհրապարակից վերջիններիս դուրս գալը: 		
3	Ջրային ռեսուրսներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում ջրային ռեսուրսների վրա հնարավոր բացասական ազդեցությունները մեղմելու նպատակով նախատեսվում են.</p> <ul style="list-style-type: none"> - փոշենստեցման համար ջրցանը կատարվելու Է ըստ անհրաժեշտության, հնարավորինս չառաջացնելով մակերևութային հոսքեր, - անձրևաջրերը և շինարարական հոսքաջրերը հեռացվելու են դեպի տարածքում տեղադրվող հոր, - ջրցանման համար օգտագործվելու Է միայն տեխնիկական որակի ջուր, - տեխնիկական ջուրը կմատակարարվի լիցենզիա ունեցող կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, որը կկնքվի շինարարության սկզբում՝ Կապալառու կազմակերպությունը, - շինարարության համար անհրաժեշտ բետոնախառնուրդը բերվելու Է պատրաստի վիճակում՝ բետոնախառնիչ մեքենաներով, -բետոնանյութի լցվածությունն ապահովել այնպես, որպեսի բետոնանյութը տեղափոխման ժամանակ չթափվի ճանապարհներին՝ երթեկությանը չխոչընդոտելու և ասֆալտածածկը չվնասելու համար: <p>Կեղտաջրերի հեռացման համար նախատեսվելու Է.</p>	Կապալառու	Նախաձեռնող

		<p>- շինարարության փուլում աշխատողներն օգտվելու են տարածքում գործող սանհանգույցից,</p> <p>- շինարարական հոսքաջրերի համար կկառուցվի սեպտիկ հոր:</p> <p>Շահագործման փուլում կացարանի ջրամատակարարման համակարգը միացվելու է քաղաքային ջրատարին, իսկ ջրահեռացման համակարգը՝ քաղաքային ջրահեռացման ցանցին:</p>		
4	Թափոններ	<p>Շինարարության փուլում թափոնների հնարավոր ազդեցությունները հողային և ջրային ռեսուրսների վրա մեղմելու նպատակով նախատեսվում է.</p> <p>-շինարարական աշխատանքների ժամանակ գործունեության տարածքը և շրջակա միջավայրը զերծ է պահել թափոնների կուտակումներից,</p> <p>-շին հրապարակի տարածքում կհստակեցվի շին աղբի նախնական կուտակման վայրը,</p> <p>-շինարարական թափոնները՝ շինաղբ, բետոնյա մնացորդներ, պարկեր և այլն, կհավաքվեն անջրթափանց պոլիէթելենային պարկերի մեջ և կտեղափոխվեն համայնքի կողմից հատկացված վայր, քանի որ տարածաշրջանում չկան կազմակերպված սանիտարական աղբավայրեր,</p> <p>- մետաղական մասերն կառանձնացվեն և որպես մետաղի ջարդոն կհանձնվեն հատուկ մասնագիտացված կազմակերպություններին՝ պայմանագրային հիմունքներով,</p> <p>- կառուցապատման փուլում կենցաղային աղբը կուտակվելու է պլաստմասե աղբահավաք տարողությունների</p>	Կապալառու	Նախաձեռնող

		<p>մեջ,</p> <ul style="list-style-type: none"> - կենցաղային աղբի հեռացումը կատարվելու է կանոնավոր՝ ըստ անհրաժեշտության՝ մասնագիտացված կազմակերպությունների կողմից՝ պայմանագրային հիմունքներով, - շինաղբի տեղափոխումը կատարվելու է փակ ծածկով ապահովված բեռնատարներով կամ բեռնատարները ծածկվելու են անջրթափանց պոլիէթիլենային թաղանթով, - բացառել աղբի կուտակումը շիրիապարակից դուրս՝ այլ բնակելի և հասարակական տարածքներում, - շինարարական աշխատանքների ավարտից հետո շինարարական կյուլերի մնացորդները, վտանգավոր կյուլերը հավաքվելու են հատուկ տարողությունների մեջ և աշխատանքների ավարտից հետո հեռացվելու են Կապալառուի կողմից: <p style="text-align: center;">Շահագործման փուլում կենցաղային աղբի կուտակման համար նախատեսվում է տեղադրել 2 հատ պլաստմասե աղբամաններ, ինչպես նաև տեսակավորման աղբամաններ:</p>		
	<p>Պատմամշակութային և բնության հուշարձաններ.</p>	<p>Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցվելու և տեղեկացվելու են համապատասխան պետական մարմին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը)՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության հետագա գործողությունները կազմակերպելու համար: Շինարարական աշխատանքները հնարավոր կլինի շարունակել միայն համապատասխան թույլտվության տրամադրման դեպքում:</p>	<p>Կապալառու</p>	<p>Նախաձեռնող</p>

6	Աղմուկ և թրթռում	<p>Շինարարության ընթացքում աղմուկի և թրթռումների մակարդակը նվազեցնելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին, -շինարարական աշխատանքներում ներգրավվելու են ժամանակակից աղմուկի առաջացման ցածր ցուցանիշներ ունեցող տեխնիկական միջոցներ, - տրանսպորտային միջոցները և սարքերն օգտագործել սարքին վիճակում, - պարբերաբար կստուգվեն և կկարգաբերվեն տրանսպորտային միջոցների շարժիչները, -բացառել շինարարության ընթացքում օգտագործվող մեքենաների կայանումը բնակելի տների, այլ հասարակական շենքերի հարևանությամբ, - օգտագործվող շին տեխնիկական և մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով, - պահպանել աղմուկի, վիբրացիայի, արտանետվող գազերի թույլատրելի նորմերը: 	Կապալառու	Նախաձեռնող
6	Արտակարգ իրավիճակներ	<p>Գործունեության իրականացման ընթացքում արտակարգ իրավիճակների հնարավոր ռիսկերը մեղմելու և դրանց առաջացումը կանխարգելելու նպատակով նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> -կտեղադրվեն տեղեկատվական ցուցանակներ, որը ներառելու է կացարանի նախագծողի, կապալառուի և այլ պատասխանատու անձանց (հեռախոսահամար), շինթույլտվության, շինարարության սկզբի և ավարտի վերաբերյալ տեղեկատվություն, - շինհրապարակը կկազմակերպվի հակահրդեհային անվտանգության 	Կապալառու	Նախաձեռնող

		<p>պաշտպանության կանոններին համապատասխան, տեղադրվելու է ջրի բաք՝ հրդեհամարման նպատակով,</p> <ul style="list-style-type: none"> - շինհրապարակն ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, - շինհրապարակն, ինչպես նաև բաց պահեստների հակահրդեհային միջտարածությունները ժամանակ առ ժամանակ կմաքրվեն հրդեհավտանգ և պայթուցավտանգ թափոններից և աղբից, - հակահրդեհային միջտարածությունները չօգտագործել նյութերի, սարքավորումների, տարաների պահեստավորման, ավտոտրանսպորտային տեխնիկայի կայանման համար, - բաց են լինելու նախատեսված ջրաղբյուրների ճանապարհները, տեղադրվելու են դրանց մոտեցման համապատասխան ցուցանակներ, - տեղադրվելու են ձայնային ազդանշաններ, հակահրդեհային անվտանգության պաստառներ, հրդեհների մասին ուղեցույց-հիշեցումներ՝ վթարների կանխարգելման համար, - հեղուկ և վտանգավոր նյութերը տեղափոխվելու են շինարարական հարթակ օգտագործումից առաջ և պահվելու են հատուկ տակդիրների վրա՝ հնարավոր արտահոսքերը բացառելու համար, - մթնոլորտային տեղումների, քամու ուժեղացման և այլ վտանգավոր երևույթների ժամանակ շինարարական աշխատանքները դադարեցվելու են: <p>Շահագործման փուլ. Շահագործման փուլում արտակարգ իրավիճակների դեպքում նախատեսվում է.</p> <ul style="list-style-type: none"> - շահագործման փուլում կացարանն 		
--	--	--	--	--

		ապահովված է լինելու հակահրդեհային կրակմարիչներով, պահպանվելու են հակահրդեհային մուտքերը՝ հրշեջ մեքենաների շրջադարձի համար:		
7	Աշխատանքի կազմակերպում և անվտանգություն, մարդու առողջություն	Շինարարության փուլում աշխատողների աշխատանքի կազմակերպման և աշխատանքի անվտանգությունն ապահովելու համար նախատեսվում է. - պահպանել ՀՀ օրենսդրությամբ պահանջվող աշխատանքային անվտանգության նորմերը, շինհրապարակում՝ անվտանգության տեխնիկայի կանոնները անցումները, վտանգավոր զոնաները կցանկապատվեն, ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրամանի պահանջները, - ապահովվել աշխատողների անվտանգությունը բարձրության վրա, - մինչև աշխատանքների սկիզբը բոլոր աշխատողները, այդ թվում նաև վարորդներն անցնելու են հրահանգավորում՝ ըստ աշխատանքի անվտանգության կանոնների, - բանվորական խմբերը լինելու են բազմապրոֆիլ և մասնագիտացված, անցկացվելու են ուսուցման և հրահանգավորման դասընթացներ,	Կապալառու	Նախաձեռնող

		<p>- աշխատողների համար ապահովել 1-ին բուժօգնության համար անհրաժեշտ դեղարկղիկով, անհատական և պաշտպանական միջոցներով (արտահագուստ, դիմակ, կոշիկ և այլն), էլեկտրական սարքավորումների հետ աշխատողները՝ դիէլեկտրիկ գորգով և ձեռնոցներով,</p> <p>- ապահովել աշխատողների համար սանիտարական և հանգստի պայմաններով (հանգստի սենյակ, հանդերձարան, լվացարան և այլն)՝ անհրաժեշտ կահավորանքով (լվացարան, աթոռ, սեղան, ջեռուցիչ և այլն),</p> <p>- շինհրապարակում և հարակից տարածքում տեղադրել աշխատանքային պայմանների, հնարավոր վտանգների մասին նախազգուշացնող նշաններ՝ տեղեկատվական և հակահրդեհային վահանակներ, վտանգն ազդարարող տեսողական պաստառներ, ճանապարհային երթևեկության, ինչպես նաև կողմնակի մարդկանց մուտքն արգելող նշաններ,</p> <p>- վերահսկել աշխատող սարքավորումների պիտանելիությունը, բացառել գործնետության վայրում խոտանված բեռնիչ սարքերի կուտակումները,</p> <p>- վերահսկել մեքենաների երթերը, հաջորդականությունը, բացառել մեքենաների կուտակումները,</p> <p>- նվազագույնի հասցնել ճանապարհների խցանումներ առաջացնող գործողություններն՝ ընդհանուր երթևեկության խոչընդոտումը՝ հասարակական անվտանգությունն ապահովելու նպատակով,</p> <p>- բացառել ավտոամբարձիչի սլաքի աշխատանքը՝ սահմանազատված սահմանից դուրս,</p>		
--	--	--	--	--

		<p>-բեռնման-բեռնաթափման աշխատանքների ժամանակ օգտագործվող բեռնամբարձիչ մեքենաները, բեռնաբռնիչ սարքերը պետք է համապատասխանեն պետական ստանդարտների կամ տեխնիկական պայմանների պահանջներին, երթևեկության արագությունը շինհրապարակում չպետք է գերազանցի 5կմ/ժ,</p> <p>- տեղադրել լրացուցիչ լուսավորման սարքեր՝ շինհրապարակի լուսավորության համար,</p> <p>- շինհրապարակի լուսավորությունը ապահովել հավասարաչափ՝ լուսավորության 2 լյուքսից ոչ պակաս,</p> <p>- շենքի ներսում եռակցման և ներկման աշխատանքները կատարել օդափոխության պայմաններում, կատարել հոսանքատար մասերի մեկուսացում,</p> <p>- վարել տեխնիկական հսկողության ամփոփիչ և անհատական մատյաններ՝ տեխնիկական վերահսկողության իրականացման համար:</p>		
8	<p>Սոցիալական</p>	<p>Շինարարության փուլում հնարավոր սոցիալական խնդիրներից խուսափելու համար նախատեսվում է.</p> <p>-շինարարական աշխատանքները կատարել սահմանված ժամերին՝ ցերեկը,</p> <p>- բացառել շինհրապարակից դուրս աղբի և մեքենաների կուտակումները,</p> <p>- գործելու է բողոքների արձագանքման ընթացակարգը:</p>	<p>Կապալառու</p>	<p>Նախաձեռնող</p>

9	Լանդշաֆտ	<p>Նախատեսվող պահեստը ժամանակակից լուծումներով և կյուլթերով իրականացվող շինությունն է:</p> <p>-Բացառել նախատեսվող տարածքից դուրս կառուցապատման այլ աշխատանքները:</p> <p>Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարել տարածքի բարեկարգում.</p> <p>- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են,</p> <p>- շինարարական հրապարակը մաքրվելու է թափոններից, վերականգնվելու է տարածքը,</p> <p>- կատարվելու են գործունեության ենթակա տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ:</p>	Կապալառու	Նախաձեռնող
10	Բարեկարգում	<p>Նախատեսվում է գործունեության ենթակա ազատ տարածքում կատարել բարեկարգման աշխատանքներ: Նախատեսվում է.</p> <p>- կառուցապատումից ազատ տարածքի հարթեցում և բարեկարգում, ներբակային ճանապարհների կառուցում:</p>	Կապալառու	Նախաձեռնող

14.Մշտադիտարկման (մոնիթորինգի) միջոցառումներ

h	Գործողություն	Նվազեցնող միջոցառումներ	Մոնիթորինգի Վայրը	Իրականացման ձևը	Ժամանակա միջոց	Մոնիթորինգ Կատարող/ Վերահսկող
---	---------------	-------------------------	-------------------	-----------------	----------------	-------------------------------

	<p>Շինարարության ընթացքում օդային ավազան, ջրային և հողային ռեսուրսների մեջ վտանգավոր նյութերի և կեղտաջրերի ներթափանցման բացառելուն ուղղված</p>	<p>- Փոշու և այլ օդի աղտոտիչների (CO, NOx և այլն) արտանետումների որակական և քանակական չափաքանակների պարբերական վերահսկում:</p> <p>- Ջրային և հողային ռեսուրսների որակի ուսումնասիրությունների կատարում,</p>	<p>Գործունեության ենթակա տարածքում</p> <p>Գործունեության տարածքում</p>	<p>Ստուգայցեր , գործիքային ստուգումներ</p> <p>Տեսողական դիտարկումներ, մասնագետի կողմից ստուգայցեր</p>	<p>Շինարարության փուլում՝ ամենօրյա:</p> <p>Փոշենստեցումը տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրը 2-3 անգամ</p> <p>Պարբերաբար՝ ոչ ուշ 3 ամիսը մեկ հաճախականությամբ</p>	<p>Կապալառու Նախաձեռնող</p>
	<p>Արտակարգ իրավիճակներ և աշխատանքի անվտանգություն</p>	<p>-Աշխատողների իրազեկում՝ իրազեկում՝ աշխատանքի անվտանգության և արտակարգ իրավիճակների ընթացակարգի մասին,</p> <p>-շինարարության կանոնների, հակահրդեհային պահանջների և</p>	<p>Գործունեության իրականացման ենթակա տարածքում</p>	<p>Իրազեկումներ և ստուգումներ</p> <p>Ստուգայցեր</p>	<p>Պարբերաբար ամենօրյա ռեժիմով,</p>	<p>Կապալառու Նախաձեռնող</p>

	<p>անձնական պաշտպանության նորմերի խստիվ պահպանության վերահսկում,</p> <p>-</p> <p>բնապահական, առողջության և աշխատանքային անվտանգության տեխնիկական վերահսկողություն՝</p> <p>Ամբողջ շինարարության ընթացքում վերահսկվելու են շինարարության որակի չափանիշները:</p> <p>Աղմուկի և թրթռումների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ:</p>	<p>Շինհրապարակ</p> <p>Գործունեության իրականացման ենթակա տարածքում</p>	<p>Ստուգայցեր</p> <p>Ստուգայցեր</p>	<p>Հասաճախակի</p> <p>Ոչ պակաս, քան երեք ամիսը մեկ անգամ</p>	
Նյութեր	Շինանյութերի գնում արտոնագրված մատակարարներից:	Լիցենզավորված կազմակերպությունների պահեստներ	Մատակարարման ընթացքում	Շինարարության փուլում՝ պայմանագրերի առկայություն	Նախա ձեռնող
Թափոն	Թափոնների	Գործունեության	համապատ	Շինարարության	Նախա

	կանոնավոր տեղափոխում:	Ենթակա տարածքից	ասխան պայմանագրերի հիման վրա տեղափոխում	ընթացքում	ձեռնող
Շինտեխնիկա և տրանսպորտային միջոցներ	<ul style="list-style-type: none"> - Շին տեխնիկայի և մեքենաների համապատասխան տեխնիկական վիճակի ապահովում, - ամբարձիչի ժամանակի և բեռնունակության օգտագործում, - շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների վառելիքի լիցքավորման և յուղման իրականացում՝ մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում: 	Շինհրապարակ շինհրապարակից դուրս՝	Սստուգայցեր Դիտողական ստուգումներ, Գործընթացի ստուգում՝ մեքենաների շահագործման ընթացքում	Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում Պարբերաբար Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում	Նախաձեռնող
Բարեկարգում	Վերականգնել և բարեկարգել շրջակա տարածքը,	Գործունեության տարածք	Դիտողական ուսումնասիրություն	Շինարարական աշխատանքների ավարտից հետո	Կապալառու Նախաձեռնող
Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում բողոքների արձագանքում	Բողոքների, դիմումների առկայություն	Գործունեության վայր	Դիմումների, արձագանքում	Շինարարության ընթացքում	Նախաձեռնող

15. Հանրային քննարկումներ

Համաձայն ՀՀ կառավարության 28 դեկտեմբերի 2023 թվականի «Հայաստանի հանրապետության կառավարության 2014թվականի նոյեմբերի 19-ի N 1325-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 2343-Ն որոշմամբ սահմանված պահանջների՝ կատարվել է հանրային ծանուցում և քննարկումներ՝ Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում: Քննարկմանը մասնակցել են Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչը, Շենգավիթ վարչական շրջանի աշխատակիցները, համայնքի բնակիչներ: Հանրային քննարկման ընթացքում բարձրացված հարցադրումները և առաջարկությունները ներառվել են հայտում: Գործունեության վերաբերյալ առկա է Երևան քաղաքի ավագանու որոշումը՝ գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: Հավելվածներ 7,8:

Գրականություն


1. СП.485.13130.2021:
2. «ԱՂՄՈՒԿՆ ԱՇԽԱՏԱՏԵՂԵՐՈՒՄ, ԲՆԱԿԵԼԻ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԵՆՔԵՐՈՒՄ ԵՎ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ» N2-III-11.3 սանիտարական նորմեր:
3. Արտակարգ իրավիճակների նախարարի 2021թ. մարտի 31-ի 372-Ն հրամանով հաստատված ՀՀ տարածքի սեյսմիկ վտանգի, սեյսմիկ գոտևորման քարտեզների և Քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020թ. դեկտեմբերի 28-ի թիվ 102-Ն հրամանով հաստատված «ՀՀՇՆ 20.04_ Երկրաշարժադիմացկուն շինարարություն. Նախագծման նորմեր»:
4. ՀՀՇՆ 20.04-2020 «Երկրաշարժադիմացկունության շինարարության նախագծման նորմեր»:
5. ՀՀՇՆ II - 7.01-96 «Շինարարական կլիմայաբանություն»:
6. ՀՀՇՆ 21-01-2014 «Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգության» նորմերին ՇՆԵՎԿ III-IV.2008:
7. ՀՀՇՆ I-2.03-03 «ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱԴԱՍՏՐ» ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ քաղաքաշինության նախարարի 2003թ հունիսի 5-ի. 38-Ն հրաման:
8. Քաղաքաշինության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ:
9. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն Քաղաքաշինության նախարարի հրաման (8 ապրիլի 2014):
10. ՀՀ Առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի «Կազմակերպություններում աշխատողների սանիտարական կենցաղային սենքերի» N 2.2..8-003-12 սանիտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին թիվ 15-Ն հրաման:
11. ՇՆուԿ 3.01.01-85 (Շինարարության արտադրության կազմակերպում),
12. Երևանի քաղաքի զարգացման, 2019-2023թթ. հնգամյա ծրագրեր:
13. ՀՀ վիճակագրության կոմիտե (<https://armstat.am>):



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ



Սույն վկայականով հաստատվում է 17 մարտի 2022 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ(ՆԵՐ)

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ

2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Երևան, Շենգավիթ Արցախի փողոց 4-րդ նրբանցք 12 շինություն

3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՏԱԹՂԹԵՐԸ

Համայնքի ղեկավարի որոշում 13.08.2020թ. թիվ 2471-Ա, Համայնքի ղեկավարի որոշումներ 04.11.2020թ. թիվ 3471-Ա և 06.11.2020թ. թիվ 3503-Ա

4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0431-0010

Մակերեսի չափը (հա)՝ 23.50023

Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական նշանակության

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

Գրանցված իրավունքի տեսակը՝ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՎԿԱՅԱԿԱՆ N 17032022-01-0116, գաղտնաբառ՝ MCFJNT1SA3BJ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով

5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

- 1) Նպատակային նշանակությունը՝ արտադրական
- 2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-011-0431-0010-001	Կաթսայատուն	10.99 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
2	01-011-0431-0010-002	Շինություն	58.06 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
3	01-011-0431-0010-003	Կաթսայատուն	42.55 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
4	01-011-0431-0010-004	Շինություն	139.33 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
5	01-011-0431-0010-005	Շինություն	35.81 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	01-011-0431-0010-006	Ջերմոց	1056.73 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
7	01-011-0431-0010-007	Ջերմոց	4990.65 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
8	01-011-0431-0010-008	Շինություն	762.94 քմ	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
9	01-011-0431-0010-009	պարիսպ	4.8 քմ. 9.6 խ.մ.	ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ

Առկա են ինքնակամ կառուցված շինություններ՝ 266.98քմ ընդհանուր մակերեսով:

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ ԱՐՄԵՆ ԽԱԼԱԹՅԱՆ

Զբաղեցրած պաշտոնը՝ Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր

ՎԿԱՅԱԿԱՆ N 17032022-01-0116, գաղտնաբառ՝ MCFJNT1SA3BJ

Փաստաթղթի իսկությունը և վավերականությունը կարող է ստուգվել Կադաստրի կոմիտեի www.e-cadastre.am կայքէջի միջոցով



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ը Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
Ե Ր Ե Վ Ա Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք
Ն Ա Խ Ա Գ Ծ Մ Ա Ն Թ Ո Ւ Ի Յ Լ Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
(ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԶԱՏԱՍԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ)

N 01/18-01-167-24 «08» 04 2024թ.

Օրյակա Թափառող կենդանիների կացարանի կառուցման
(Օրյակաի անվանումը, կառուցում, վերակառուցում, վերանորոգում, ուժեղացում, վերականգնում, գործառնական նշանակության փոփոխություն)
«Աշխատանքային նախագիծ» (բարձր դիսկալնության օրյակա IV կատեգորիա) նախագծային փաստաթղթերի մշակման համար
(հակիրճ բնորոշումը, հորոշությունը, ռիսկայնության աստիճանը (կատեգորիան), նախագծման փուլերը և այլն)
Գտնվելու վայրը Երևանի քաղաքային շրջան, Արցախի փողոց 4-րդ նրբանցք 12 շինություն
(վարչական շրջանը, փողոցը, շենքի համարը, հողամասի ծածկագիրը)
Կառուցապատողներ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչություն (հեռ. 011-514-132)
(կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը, ազգանունը, ընկալության վայրը, հեռախոսահամարը, էլեկտրոնային հասցեն)
Առաջադրանքի տրամադրման հիմքը Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի շինարարության և բարեկարգման վարչության հայտը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17032022-01-0116 վկայականը, նախագծի էսքիզային առաջարկը:
(կառուցապատման նպատակով ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հողամասի տրամադրման, անշարժ գույքի փոփոխման իրավունքը հաստատող անհրաժեշտ փաստաթղթեր)
Առաջադրանքի գործողության ժամկետը Երեք տարի:

(ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N1 հավելվածի 31-րդ կետի համապատասխան)
Ն Ա Մ Ա Գ Ծ Վ Ո Ղ Հ Ո Ղ Ա Ս Ա Ս Ի Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ը

1. Հողամասը գտնվում է (աստղանիշով) (*) նշված դրոշյների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)
Նպատակային նշանակությունը՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն, կադաստրային ծածկագիրը՝ 01-011-0431-0010:

2. (*) Հողամասի չափերը 23.50023 հա:
(հողամասի սահմանները՝ կոորդինատային նշանարմամբ, մակերեսը, (հա))

3. Հողամասի առկա վիճակը Կաթսայատներ /10.99 քմ, 42.55քմ/, շինություններ /58.06 քմ, 139.33 քմ, 35.81 քմ, 762.94 քմ/, ջերմոցներ /1056.73 քմ, 4990.65 քմ/, պարիսպ /4.8 քմ /, ինքնակամ շինություններ /266.98 քմ /:
(նեյիֆի բնութագրը, շենքերի (այդ թվում՝ բանդան ենթակա) առկայությունը (օգտագործումը, նշանակությունը, հատկանիշները, շինարարական նյութերը և այլն), կանաչապատումը, բարեկարգումը և այլն)

4. (*) Տրանսպորտային պայմանները Թեյշերախի փողոց, Արցախի փողոց 4-րդ նրբանցք:
(ճանապարհների առկայությունը, երկաթուղային տրանսպորտի մուտքումները և այլն)

5. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ Նախագծվող և կից տարածքներով անցնող ինժեներական գծեր և հաղորդակցուղիներ:
(ջրամատակարարման, կոյուղու, գազամատակարարման, տաք ջրի մատակարարման, էլեկտրամատակարարման, էլեկտրոնային հաղորդակցության համակարգեր)

6. (*) Կից հողամասեր (նախագծվող հողամասով կամ կից տարածքով անցնող ինժեներական ենթակառուցվածքներ, այդ թվում՝ ստորգետնյա)
Թեյշերախի փողոց, ջերմոցներ, թափառող կենդանիների կացարան:
(կից հողօգտագործումների անվանումը և դրանց սահմանները՝ համաձայն ներկայացված սխեմայի)

7. Բնության հատուկ պահպանվող և (կամ) պատմամշակութային հուշարձանների տարածքներ (պահպանական գոտիներ) Առկա չէ:
(հուշարձանի անվանումը, կարգավիճակը և այլն)

8. (*) Հատակագծային սահմանափակումներ -----
(տեղանքում գործող արտադրական, կադաստրային օբյեկտների, ինժեներատրանսպորտային ենթակառուցվածքների և այլ օբյեկտների նկատմամբ սահմանափակումներ, այդ թվում՝ սերվիտուտներ)

Ն Ա Մ Ա Գ Ծ Ա Յ Ի Ն Պ Ա Հ Ա Ն Ջ Ն Ե Ը
(աստղանիշով) (*) նշված դրոշյների գրաֆիկական արտացոլումը տրամադրվում է կից ներկայացվող ամփոփ սխեմայով՝ Մ 1:500)

9. Ճարտարապետահատակագծային պահանջներ Մշակել թափառող կենդանիների կացարանի կառուցման նախագիծ՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.17032022-01-0116 վկայականով ամրագրված հողատարածքի սահմաններում:
(եյնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և Նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներից, առկա ջարդաքաղցրահամայն ծրագրային փաստաթղթերի դրոշյներից կամ դրանց բացակայության դեպքում՝ կազմավորված (կազմավորվող) ջարդաքաղցրահամայն միջավայրի պայմաններին, առաջարկություններ ճակատների ձևավորման, տանիքների, արտաքին դռների, պատուհանների համամասնությունների և գույնային լուծումների ներառելով)

9.1. (*) Օրյակաի հեռավորությունը կարմիր գծից (մետր) -----

9.2. (*) հեռավորությունը հարևան հողակտորներից (օրյակտներից) (մետր) -----

9.3. Թույլատրելի բարձրությունը (մետր) Շինությունը նախագծել մեկ հարկանի, առավելագույն բարձրությունը հողամասի հատակագծային նիշից նախատեսել մինչև 3.5 մ:
(սահմանային հարկայնության բարձրությունը գերազանցող շենքերի և շինությունների նախագիծն դեպքում՝ ՀՀՇՆ ՈՒ-6.02-2006 «Մեկնակայուն շինարարություն նախագիծման նորմ» շինարարական նորմերով սահմանված պահանջների ապահովում (հատուկ հաշվարկային մեթոդներ, սեյսմակայունության բարձրացման միջոցառումներ և այլն))

9.4. կառուցապատման խտության գործակիցը -----
(կառույցի (կառույցների) ընդհանուր մակերեսի հարաբերությունը հողամասի մակերեսին)

9.5. կառուցապատման տոկոսը Համաձայն նախագծի:
(կառուցապատվող (անջրանցիկ) տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.6. կանաչապատման տոկոսը -----
(կանաչապատ տարածքի հարաբերությունը հողամասի մակերեսին՝ տոկոսներով) (%)

9.7. այլ պահանջներ
• Տարածքում հնարավոր է նախագծել միանյարկ օժանդակ շինություններ:
• Տանիքը նախատեսել փոքր թերությամբ կամ հարթ: Ջրահեռացումը նախատեսել կազմակերպված, բացառելով անձրևաջրերի հոսքը դեպի հարևան հողատարածքներ:

- **Հատակագծային լուծումները մշակել համաձայն պատվիրատուի առաջադրանքի՝ հաշվի առնելով ետրմատիվային պահանջները:**

10. Հողամասում գտնվող շենքերի և շինությունների քանդման կամ տեղափոխման (ապամոնտաժման) պայմանները և աշխատանքների հերթականությունը -----

11. Ստորգետնյա, կիսանկուղի և առաջին հարկերի տարածքների օգտագործման պայմանները -----

12. (*) Ինժեներական ցանցեր և սարքավորումներ **Պահանջներ գոյություն ունեցող և նախագծվող ենթակառուցվածքների ու ցանցերի նկատմամբ:**

12.1. (*) Զրամատակարարում, կոյուղի, տաք ջրամատակարարում Կցվում է: (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.2. (*) Էլեկտրամատակարարում Կցվում է: (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.3. (*) Գազամատակարարում ----- (համաձայն մատակարարող կազմակերպության տեխնիկական պայմանների)

12.4. (*) Էլեկտրոնային հաղորդակցության մալուխատար կոյուղու (ներառյալ դիտահորը) տեղադիրքը ----- (համաձայն ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 57-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված էլակետային տվյալների)

12.5. Թույլ հոսանքներ

12.6. Աղբահանություն

13. Տարածքի ինժեներական նախապատրաստում **Կազմակերպել ջրահեռացում:**

14. Բարեկարգում **Տարածքը բարեկարգել և կանաչապատել, հնարավոր է ցանկապատել:**

15. Երկարարական նյութեր **Երկաթբետոն, մետաղ, ապֆայտբետոն, քարե շար, երեսապատման բարձրորակ նյութեր:**

16. Պաշտպանական կառույցներ ----- (արտակարգ իրավիճակներում մարդկանց օբյեկտների պաշտպանության միջոցառումները)

17. Հակահրդեհային պահանջներ **Նախատեսել հրդեհային անվտանգության ապահովման միջոցներ:**

18. Հաշմանդամների և քնակշտության սակավաշարժ խմբերի պաշտպանության միջոցառումներ ----- (հակահրդեհային անվտանգության ապահովման միջոցառումները)

19. Երջակա միջավայրի պահպանում ----- (չրջակա միջավայր վտանգավոր ազդեցությունից քաղաքում միջոցառումները)

20. Երկարարության կազմակերպում **Մշակել շինարարական աշխատանքների կազմակերպման նախագիծ՝ նկատի ունենալով ՀՀ կառավարության 12.04.2001թ. հ.286 որոշմամբ հաստատված կարգի 44-րդ կետի «ԺԲ» ենթակետի և 44.1 կետի պահանջները, ինչպես նաև՝ Երևան քաղաքի ավագանու 16.03.2012թ. հ.405-Ն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները:**

21. Առաջադրանքի գործողության ժամկետը և նախագծի մշակման փուլերը **Երեք տարի:**

Լ Ը Մ Յ Ո Ւ Ց Ի Չ Պ Ա Յ Մ Ա Ն Ն Ե Ը

22. Նախագծային փաստաթղթերի փորձաքննությանը ներկայացվող պահանջներ **ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման N2 հավելվածի պայմանների և N 4 հավելվածի N 2 ցանկով սրված չափորոշիչներից էլեկտրոլ Պետական համալիր փորձաքննություն:**

23. Միջանկյալ համաձայնեցում **Անհրաժեշտության դեպքում, Էսքիզային նախագծի միջանկյալ համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:**

24. Հասարակական քննարկումներ **(Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված փորձաքննության տեսակի կամ նախագծի նրաշաղկապից հղում կատարելով համապատասխան իրավական ակտին)**

25. Համաձայնեցումներ **• Համաձայնեցում Երևանի քաղաքապետի հետ:
• Մինչև նախագծային աշխատանքները սկսելը առկա ինժեներական ենթակառուցվածքի տեղափոխման պայմանների վերաբերյալ համաձայնություն ձեռք բերել տվյալ ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ:**

26. Փոստային բաժանորդային պահարանների տեղադրում **(նշվում են տվյալ օբյեկտի համաձայնեցման օրենքով սահմանված պահանջները՝ հուշարձանների ու բնության պահպանության և այլ լիազորված մարմինների հետ, ինչպես նաև ՀՀ կառավարության 19 մարտի 2015 թվականի N 596-Ն որոշման N 1 հավելվածի 56-րդ կետով սահմանված դեպքերում՝ ինժեներական ենթակառուցվածքի սեփականատիրոջ (օգտագործողի) հետ)**

27. Այլ պայմաններ **Նախագծի կազմը և բովանդակությունը համապատասխանեցնել ՀՀ կառավարության առթիվ քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 11.09.2017թ. «Բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները և ՀՀ քաղաքաշինության նախարարի 29.11.2006թ. հ.273-Ն հրամանի ու.ժը կորցրած ձևաչափը մասին» հ.128-Ն հրամանով հաստատված դրույթներին:**

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝
Կ.Տ.
Ս.Նազարյան (Ն/13846-24)



ՏԻԳՐԱՆ ԱՎԻՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

10 սեպտեմբերի 2024թ.

N 187-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի հ.1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի պողոտա 4-րդ նրբանցք հ.12 հասցեում թափառող կենդանիների կացարանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:



ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 10
Երևան

Հավելված 5. Հանրային քննարկման արձանագրություն, մասնակիցների ցանկ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

09.08.2024թ.

ք. Երևան

2024թ. օգոստոսի 9-ին ժամը 11:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքով /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ (Օրենք), ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշման հավելվածով սահմանված կարգով, Երևանի Շենգավիթ վարչական շրջանի ղեկավարի նստավայրում (հասցե՝ Երևան, Գ. Նժդեհի փ. 26), կայացավ Երևանի քաղաքապետարանի կողմից ներկայացված Երևան քաղաքի Շենգավիթ վարչական շրջանի Արցախի պողոտա 4-րդ նրբանցք հ. 12 հասցեում թափառող կենդանիների համար կացարան կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ առաջին հանրային լսումը:

Ներկա էին Երևանի քաղաքապետարանի, Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչները (Մասնակիցների ցանկը՝ ստորագրություններով և լուսանկարները կցվում են արձանագրությանը):

Ելույթ ունեցան՝

Հանրային քննարկումը բացեց Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության գլխավոր մասնագետ, համայնքի ղեկավարի կողմից հանրային լսման համար լիազորված անձ՝ Էլլադա Արամյանը: Ներկայացրեց հանրային լսման առարկան, նախատեսվող գործունեության վերաբերյալ հանրային քննարկման իրականացման կարգը՝ համաձայն կառավարության որոշման: Նշեց, որ հանրային քննարկման վերաբերյալ ծանուցումը կատարվել է Օրենքի և կառավարության որոշման պահանջներին համապատասխան և սահմանված ժամկետներում հանրային քննարկման վերաբերյալ հայտարարությունը հրապարակվել է «Փաստ» թերթում, տեղադրվել է քաղաքապետարանի պաշտոնական կայքում: Նշեց նաև, որ շահագրգիռ հանրության կողմից գրավոր առաջարկություններ, դիտողություններ և կարծիքներ ծանուցումից հետո 20 աշխատանքային օրվա ընթացքում Երևանի քաղաքապետարան չեն ներկայացվել: Այնուհետև խոսքը փոխանցեց Երևանի քաղաքապետարանի ներկայացուցչին:

Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի բնապահպանության վարչության պետի տեղակալ Գորիկ Ավետիսյանը նշեց, որ ծրագիրն իրականացվելու է Երևանի քաղաքապետարանի կողմից, հանդես է գալիս որպես նախաձեռնող: Նախագիծը իրականացվել է «ԷյվիԷն Գրուպ» ՍՊԸ-ի կողմից 2023-2024թթ.: Գ.Ավետիսյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության տեխնիկական ցուցանիշները, ճարտարապետահատակագծային լուծումները:

Արմեն Քոչարյանը հարց բարձրացրեց կացարանում նախատեսվող կենդանիների քանակի վերաբերյալ:

Հարություն Առաքելյանը պատասխանեց, որ կացարանը նախատեսված է մինչև 300 շների համար:

«Կենդանիների խնամքի կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն Հարություն Առաքելյանը նշեց, որ նախատեսվող կացարանն առաջինն է Հայաստանում, կենդանիների քանակը ինչքան շատ , այդքան դժվարանում է դրանց խնամքը, մյուս կացարանները, որ նախատեսվում է կառուցել վարչական շրջաններում լինելու են ավելի փոքր թվով կենդանիների համար: Նշված կացարանը կառուցվել է հենց կազմակերպության տարածքում և ավելի հեշտ է լինելու հնարավոր ռիսկերը կառավարել, կացարանը շատ բարդ է պահել, քան փողոցում այդ կենդանիների հարցը լուծելը: Առաջադեմ երկրներում նման փորձն է կիրառվում, թափառող կենդանիների հարցը լուծում են կացարաններում պահելով: Վարչական շրջաններից հավաքագրել են տարածքների տվյալները, առաջիկայում նախատեսվում են ևս 2 կացարանի կառուցում, մոնիթորինգի տվյալներով նախապատվությունը տրվել է Մալաթիա-Սեբաստիա, Շենգավիթ, Նոր Նորք, Նուբարաշեն վարչական շրջանները: Նշված շրջաններում բավականին շատ են թափառող կենդանիները: Քննարկումներից հետո կորոշվեն և կնախատեսվեն ևս 2 կացարան մոտ 100-150 կենդանիների համար, որոնց պահելն ավելի հեշտ կլինի: Կարևոր է, որ ազատավանդակները նախատեսված են 7,5 քառ.մ տարածք՝ մինչև 3 կենդանու համար, դիմացը բաց տարածք է նախատեսված կենդանիների համար: Վերցվել է միջազգային փորձը կացարանը կառուցելու համար: Կացարանի կառուցումը հնարավորություն կտա անցել թափառող կենդանիների հարցի լուծման հաջորդ փուլ, քանի որ կազմակերպությունում հնարավորություն ունեն ժամանակավոր պահելու մինչև 100 կենդանի, որոնց ստերջացնելուց հետո նորից բաց են թողնում նույն տարածքներում: Պահպանությունը հնարավոր է կատարել մասնավոր անհատների միջոցով, ովքեր կամավորության սկզբունքով կօգնեն կացարաններում կենդանիների խնամելուն, աշխարհում նման փորձը կա, ամեն դեպքում համայնքը պատրաստ է խնամքի պարտավորությունը վերցնել իր վրա:

Արմեն Քոչարյանի հարցին Հարություն Առաքելյանը պատասխանեց, որ կազմակերպությունում հնարավորություն ունեն ժամանակավոր պահելու մինչև 100 կենդանի:

Քննարկվեցին կացարան կառուցելու նախատեսվող տարածքի գտնվելու վայրի, տեղանքի վերաբերյալ հարցեր:

Հարություն Առաքելյանը նշեց, որ կացարան պահելու փորձ չկա, շատ կարևոր է, որ այն կառուցվելու է կազմակերպության տարածքում, որ անմիջական մասնագետների ուշադրության կենտրոնում լինի:

Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչը նշեց, որ գրությամբ ներկայացրել են տարածքները կացարանների համար, քանի որ նախատեսում են կառուցել, ինչու ավելի մեծ թվաքանակի կենդանիների համար չեն

նախատեսել կացարանը, քանի որ քաղաքում նման հարմար տարածքներ քիչ են մնացել:

Հարություն Առաքելյանը պատասխանեց, որ համաձայն չէ նշված կարծիքի հետ, քանի որ գործնականում սխալ մոտեցում է բոլոր կենդանիներին մի տեղ պահելու, որովհետև հետագա ռեսուրսների տեղաբախշման համար էլ է սխալ, նշեց, որ չի կարծում, որ համայնքում չկան հարմար տարածքներ կենդանիների համար կացարան կառուցելու համար: Շենգավիթ վարչական շրջանում կան մասնավոր գործող կացարաններ, եթե մասնավոր հատվածը տարածք գտել է կացարանի համար, համայնքի համար խնդիր չի լինի համապատասխան տարածքներ գտնել:

Շենգավիթ վարչական շրջանի աշխատակազմի ներկայացուցիչը հարց բարձրացրեց բնակելի տարածքից հեռու կացարաններ կառուցելու վերաբերյալ, որպեսզի հետագայում չխանգարի քաղաքի զարգացման ծրագրերին:

Հարություն Առաքելյանը պատասխանեց, որ վարչական շրջանը գրություն է ստացել ներկայացնել տարածք, որը հեռու կլինի կենտրոնական ու բնակելի հատվածներից, նշեց, որ անձամբ կուսումնասիրի ներկայացված տարածքները պարզելու արդյոք առաջիկայում նախատեսվող կացարանները կխանգարեն վարչական շրջանի հետագա զարգացման ծրագրերին, թե ոչ:

Գորիկ Ավետիսյանը ներկայացրեց Օրենքով սահմանված գործընթացը կապված կացարանի կառուցման հետ:

Սոնա Աղեկյանը հարց բարձրացրեց կանաչ տարածքներ նախատեսելու վերաբերյալ:

Հարություն Առաքելյանը պատասխանեց, որ կանաչ տարածքներ չեն նախատեսվում, այլ ստվերային հատվածներ, մի քանի մեծ ազատավանդակներով կլինեն ծառեր, որոնք ստվեր կապահովեն կենդանիների համար, քանի որ կանաչ հատված հնարավոր չի լինի պահել կենդանիների առկայությամբ:

Քննարկվեցին նախատեսվող կացարանի տանիքին, շենքի բարձրությանը վերաբերող հարցեր:

Սոնա Աղեկյանը նշեց, որ «Մայր Հայաստան» խմբակցության անդամները անսպասելի այցելել են կազմակերպության տարածք, քանի որ կային բողոքներ քաղաքացիներից, անակնկալի են եկել տարածքի մաքրության, կարանտինային վիճակի պահպանման մասով, ուղղակի հիացել են իրավիճակով: Ս.Աղեկյանը նշեց, որ վստահ են, որ Հ. Առաքելյանի գլխավորությամբ նույն ձևով էլ կշարունակվի, մաղթելով բարի ընթացք կացարանի կառուցմանը:

Է. Արամյանը նշեց, որ մշակվելու է ՇՄԱԳ հաշվետվություն համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության և փորձաքննության մասին» օրենքի պահանջների, որը ենթակա է փորձաքննության: Հաշվետվությունում կներառվի բոլոր այն միջոցառումները, որոնք շինարարության փուլում կիրառելով հնարավոր կլինի մեղմել և

նվազագույնի հասցնել հնարավոր ազդեցությունները: Շրջակա միջավայրի վրա հիմնական ազդեցությունը լինելու է փոշու տեսքով, որը կրելու է ժամանակավոր բնույթ, շինարարության կազմակերպման ընթացքում կպահպանվեն «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի պահանջները:

Է. Արամյանը եզրափակեց հանրային լսումը, նշելով, որ հանրային լսումից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում կկազմվի հանրային լսման արձանագրությունը, իսկ

5 աշխատանքային օրվա ընթացքում հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունը կներկայացվի համայնքի ավագանուն և նախաձեռնողին:

Վարող՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
բնապահպանության վարչության
գլխավոր մասնագետ՝ Է. Արամյան



Նախաձեռնողի ներկայացուցիչ՝
Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի
քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար
Շավարշ Գրիգորյան



Հանրային լսման մասնակիցների
ՑԱՆԿ

անուն, ազգանուն	պաշտոն	հեռախոս	ստորագրություն
Կարեն Չոբանյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	077 49 49 77	
Արտուրյան Գևորգ	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	094 66 47 55	
Չոբանյան Կարենյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	034 000 020	
Դավիթ Չոբանյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	098 10 22 11	
Արթուր Արթուրյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	099 35 31 80	
Պարսևոս Կարամյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	033 03 00 07	
Էդուարդ Արարատյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր		
Արտուր Բաբայան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր		
Վահագն Մանուկյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր		
Վահագն Մանուկյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	094 91 11 50	
Գրիգոր Կարամյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	036 00 12 05	
Կարամյան Կարենյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	098-55 52 09	
Վահագն Կարամյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	043-30-93-50	
Վահագն Կարամյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր		
Վահագն Կարամյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր		
Վահագն Կարամյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր		
Վահագն Կարամյան	Կոմունիստական Կուսակցության Կենտրոնի Կոորդինատոր	011-514-188	






ՇԱՆՈՒՅՆ ՈՒ ՄԻՍՈՒՄԱՆԱԿ... ԱՆՀԱՅՏ

Ինչ իմաստ ունի գլխաշորը, և ինչու են կանայք այն կրում

ՎԱՍՏ ԽԱՐԵՎԱՆ

Գլխաշոր մեծ կտորի տեսքով արտատառ է՝ սովորաբար եռանկյունաձև։ Այսօր այն նորաձև տարր է աշխարհի կանանց զգեստապահարսման...



Կրողին կամ մեջքին՝ 20-րդ դարում մամուլի և փոփ-կուլտուրայի տարածումը փոքրիկ գլխաշորը...

Շատ երկրներում կնոջ կրած գլխաշորի շատ բան կառուցի և հասկանալի կարգավիճակը, բնակության վայրը, ֆինանսական և ընտանեկան դրությունը...

Կալիֆոռնիացիների և սոփիստիկ գլխաշորը և երկ կրել սպիտակ գլխաշորը։ Կլմուսանալով, դրանք ժամանակի ընթացքում չեն արմատավորվել...

Ամերիկայում «քանոթի» երաժշտական

ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Պատմության այս օրը (11 հուլիսի)

- 1795- Չինաստանի հյուսիս-արևելքում հատմանը 6 հազար հին ռազմիկների սրճանների գեղեզմանը:
1985 - առաջին անգամ Playboy ամսագրում հրատարակել են փոփ-ստղ Ատորնիայի մեկ լուսանկարը:
1989 - Ռուսաստանում սկսվել է Կուզբասի հանրապետության գործարարը:
1995- Բոսնիական պատերազմի ժամանակ սերբական զորքերը գրավել են Մյեդինեիցան և սպանել մոտ 8000 անզեն ռուսներին տղամարդու:
2010- Իսպանիայի ֆուտբոլի ազգային հավաքականը առաջին անգամ դարձել է ֆուտբոլի աշխարհի չեմպիոն:

- 1934-ԵՃԱԵԼ է իսլամացի մոլորեղի, Armani ընկերության հիմնադիր Ջորջիո Արմանին:
1937-Կախմանը և սիբիրյան ճամբարներում սերտացրել են ժողովրդի մեծ մասը:
1942 - Երրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ Լենինգրադի շրջանի ինստիտուտի Տոկուրի զորի շրջանը մեծ զինամատակարարի կողմից գերմանացիների կողմից գերել է վերջին գերակա Վլասովը:
1971-Պիտերբուրգում կայացել է «Ֆիուս Բիթսուս-տանախառն» ռոք-օպերայի սրբափեսա:

ՏԱՐԻՐԻՆԱԿ... ՏԻՆԵՆԵՐ

Արևմտյան մեկ օրը հավասար է մեր 58 օրվան, սակայն, մինչև մասնակցությունը մեկ տարի մեր 88 օրը է փոխել ինչու, քանի որ Արևմտյան շատ ուժեղ է պտուղը և այնպիսի շուրջ, քայքայում են արագ և պտուղը մեղմանը շուրջ:
Սատուրնը շատ մեծ մեկ այլ օրվա էլ ունի, որը քայքայում է 2009 թ.:

ՍՈՒՐՈՒՆՈՒՄ

Two 4x4 grid puzzles with numbers 1-9. The first grid has numbers 2, 1, 9, 7, 3, 4, 3, 2, 8, 1, 2, 1, 7, 1, 3, 2. The second grid has numbers 8, 5, 9, 4, 3, 8, 6, 8, 2, 2, 6, 1, 4, 1, 8, 7, 7, 6, 3, 1, 4, 5, 9, 2, 9, 6, 3, 7, 5.

ԲԱՄԱՆՈՐԴԱԳՐԿԵՐ



ԳՆԱՆՈՒՄԱՆ-ՄԱՆՈՒՄԱՆ, ՕՐԱԿԵՐԵՐ
Բաժնորդագրության համար դիմել
«ՔՆՍ ՍԵՐՈՒՆ» (010) 525301, 56 17 03
«ՊՐԵՍ ՍԵՆՆԵՐ» (060) 49 00 49
«ՆԱՅՄԱՄՈՒՆ» (010) (091) (093) 45 82 00

Փաստ ԱՅՆԱՅՆ
ԳՆԱՆՈՒՄԱՆ ԻՆՏԵՐՆԵՏ
ԱՐՏԱԿ ԵՐԱՐՄԱՆ


Ֆուտբոլի «Վարդան Բարսեղյան» ԱԶ
Դեռևս գրանցված վկայական 81.00878,
տրված 01.09.2001:
Նտորագրված է տպագրության 10.07.2024 թ.:
Տպագրված է «ՓՈՐ» ՆՊՇ տպարանում: Չասցե՝
ք. Երևան, Բազմաբնակ 70ա: Տպագրված 2000:

Կրթիչը չեն դրամատուրգ և չեն վերադարձվում:
Օրաթերթի մյուսերի օգտագործման դեպքում հրավեր
«Փաստին» պարտավոր է:
Չասցե՝ Երևան, Դեռուցի 18: Գե՝ 041-90-22-11
էլ. փոստ՝ pastert@gmail.com
Գե՞ 150 դրամ





ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1:500



ՀԱՍՏԱՉԱՅՆԵՑՎԱԾ Է
ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱԶԱԳԻՏ՝

Տ. ԱՎԻՆՅԱՆ

	ԼՂԾ	Ա. ՄԱՌՏԻՐՈՍՅԱՆ	ԵՐԵՎԱՆԻ ԶԱՂԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ 4-րդ ԼՂՐԱՐԱԶԸ 12 ՏԱՐԱԾՈՒՄ ԹԱԹՈՒՄ ԿԵՆՏՐԱԼԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՆՍՏԱՆԱԿՈՐ ԿԱՑԱՐԱՆԻ ԱՆՍՏԱԳԻԾ - ԱՆՍՏԱՐԱԾՎԱԾ			
	ՃԱՐՏԱՐԱԳԻՏ Ե. ԿԱՌՈՒՅԱՆՅԱՆ		ՃԱՐՏ.ՇԻՆ.ՍԱՍ	ՓՈՒԼ Ա.Ն.	ԹԵՐԹ 3	ԹԵՐԹԵՐ 17
	«ԷՅ ԿԻ ԷՆ ԳՐՈՒՄ» ԱՊՐԸ ՏՆՕՐԵՆ Գ.ԲԵԶԻՐՅԱՆ		ԳԼԽԱԿՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ 1:500	ՃՐԴ - Ա - 0126 ԿԱՂ - Ա1 - 011		